ՀՀ Լոռու մարզի Օձուն, Ալավերդի, Ախթալա, Շնող համայնքների բյուջեներում մետաղաձուլական և հանքարդյունաբերական գործունեություն ծավալող ընկերությունների վճարներից հոսքերի և դրանց վերաբաշխման արդյունավետության ուսումնասիրություն՝ ԱՃԹՆ գործընթացի ներքո

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից, «Թափանցիկ և հաշվետու հանքարդյունաբերություն» ծրագրի ներքո, որն իրականացվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով, «Թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում քաղաքացիական հասարակության մասնակցության միջոցով» ծրագրի շրջանակներում եւ Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոնի համագործակցությամբ:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ

Ալավերդի -2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Ընդերքօգտագործումը ՀՀ Լոռու մարզում. պատմական ակնարկ 5

Ախթալա, Ալավերդի, Շնող, Օձուն համայնքներում մետաղաձուլական և հանքարդյունաբերության հետևանքներից ազդեցություն կրող համայնքների սոցիալական ու բնապահպանական հիմնախնդիրները (ամփոփ նկարագիր) 7

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից մուտքերը պետական բյուջե 23

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲ, «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊ ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները 2016-2018թթ.-ին 24

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի 2016 - 2017 թթ. գործունեության վերաբերյալ տեղեկատվությունն ըստ ընդերքօգտագործողի կողմից ներկայացված հրապարակային հաշվետվությունների և ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի 25

2016 - 2017 թթ. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից վճարված ընդերքօգտագործման վճարներ 26

2016 -2017 թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկեր, մաքսային վճարներ, տուգանքներ, ըստ ընդերքօգտագործողի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվությունների 27

«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից վճարված հարկեր, մաքսային վճարներ, տուգանքներ, ըստ ընդերքօգտագործողի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվությունների 29

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ 31

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից ՏԻՄ վճարած հարկեր և վճարներ ըստ ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների 31

2016 - 2018 թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից ՏԻՄ վճարած հարկեր և վճարները 34

«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից 2016-18թթ. վճարված հարկերը և այլ վճարները համայնքի բյուջե ըստ ընդերքօգտագործողի կողմից ներկայացված հաշվետվության 35

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին 2016-18թթ. հատկացված մասհանումները և դրանց ներքո իրականացված ծրագրերի արդյունավետությունը 36

Ախթալա համայնքում իրականացված բնապահպանական ու առողջապահական սուբվենցիոն ծրագրերը և դրանց արդյունավետությունը 37

Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն Ալավերդի, Աքորի, Հաղպատ

ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները և բնապահպանական և առողջապահական ծրագրերը 39
«Թեղուտ» ՓԲԸ-ի կատարած բնապահպանական վճարներից մասհանումները ազդակիր համայնքներին 42
Օձուն համայնքին հատկացված բնապահպանական սուբվենցիաները և դրանց ներքո իրականացված ծրագրերը 42

Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ 43

«Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից Համայնքին կատարած անհատույց օտարումները 2016-2017թթ. 43
2016 - 2018 թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից կատարված անհատույց օտարումները 45
«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՓԲԸ-ի կողմից կողմից վճարված այլ հարկեր և վճարներ 47

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրեր 48

Պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարներ 49
Ընդերքօգտագործման պայմանագրերի ուսումնասիրություն 49

Մասնակցային հետազոտության արդյունքներ 52
Բացահայտումներ 55
Առաջարկություններ 60
Հավելված 1 66
Օգտագործված նյութեր, կայքեր 69

Ներածություն

Օգտակար հանածոների կայուն և թափանցիկ կառավարման գործում մեծ դերակատարում ունեն երկրների կառավարությունները, որոնք պետք է ապահովեն պատշաճ ընդերքօգտագործման համապատասխան իրավական դաշտ և օրենսդրության կիրարկում: Հանքարդյունաբերող ընկերությունները պետք է վարեն պատասխանատու բիզնես, շարունակաբար զարգանալով և համապատասխանեցնելով գործունեությունը միջազգային չափանիշներին համահունչ: Մյուս շահագրգիռ կողմերը՝ միջազգային և տեղական ֆինանսական կառույցները, ներդնողները, հասարակական կազմակերպությունները, քաղհասարակության անդամները, տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես ունեն հատուկ գործառույթ ընդերքօգտագործման ոլորտում թափանցիկության ապահովման հարցերում:

Բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է համարվում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ): ԱՃԹՆ-ի ստանդարտն ընդգրկում է բնական պաշարների արդյունահանումից մինչև դրա՝ երկրի քաղաքացիների վրա ունեցած ազդեցության հետ կապված բոլոր հիմնական խնդիրները, մասնավորապես, ինչպես են տրամադրվում և գրանցվում ընդերքօգտագործման և ոլորտի այլ թույլտվություններն ու պայմանագրերը, ովքեր են այս գործընթացների շահառուները, ինչպիսին են ֆինանսական և իրավական կարգավորումները, որքան արտադրանք է արտադրվում, ինչքան են կազմում ոլորտից պետական բյուջե ուղղվող եկամուտները, ինչպես են տեղաբաշխվում այդ եկամուտները, ինչ ներդրում է ապահովվում տնտեսության մեջ՝ ներառյալ զբաղվածության աճը:

Հայաստանը համարվում է ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր 2017թ. մարտի 9-ից և սկսած այդ օրվանից՝ 2.5 տարվա ընթացքում պետք է անցնի միջազգային վավերացման գործընթաց ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի կողմից նշանակված վավերացնողների կողմից:

Նախաձեռնությանը միացած յուրաքանչյուր երկրում ԱՃԹՆ-ն իրականացվում է կառավարության, արդյունահանող ճյուղերի գործարար հատվածի կազմակեպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կոալիցիայի միջոցով՝ ստեղծելով բազմաշահառու խումբ (ԲՇԽ):

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորվել է վերահսկել ԱՃԹՆ-ի իրականացումը: Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն կազմված է կառավարության, հանքարդյունահանող կազմակեպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից:

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Շնող և Օձուն համայնքներում մետաղական հանքարդյունահանող ընկերությունների կողմից եկամտային հոսքերը համայնքային բյուջեներ և դրանց նպատակային վերաբաշխումը, ինչպես նաև այդ ընկերությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ-ների) գործառույթների իրականացման

թափանցիկությունը և արդյունավետությունը, ներկայացնելով համապատասխան առաջարկություններ: Հետևաբար, նպատակից բխող խնդիրներն են՝ ուսումնասիրել և վերլուծել ընդերքօգտագործողների կողմից պետական և համայնքային բյուջեներ կատարված վճարների հաշվին նշված համայնքների սոցիալական և բնապահպանական ուղղվածության, ներառյալ ընկերությունների գործունեությամբ պայմանավորված ազդակիր համայքներին հատկացվող սուբվենցիաներով իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, համայնքներին տրամադրված նվիրատվությունները կամ այլ բարեգործական հատկացումները, համայնքների բնակիչների՝ որպես ազդակիր համայնքի ներկայացուցիչների, տեղեկացվածությունը հանքարդյունաբերական ընկերությունների և ՏԻՄ-երի կողմից իրականացվող բնապահպանական և առողջապահական ծրագրերի մասին, ինչպես նաև ուսումնասիրել համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրերը և այդ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը և այս ամենի արդյունքում մշակել առաջարկությունների փաթեթ ու ներկայացնել պատկան մարմիններին: Բացահայտելով թիրախ համայնքներում հանքարդյունաբերության հետևանքով առաջացած բնապահպանական, սոցիալական և առողջապահական խնդիրները և դրանց պատճառահետևանքային կապը, առաջարկներ ներկայացնել ԱՃԹՆ զեկույցի բովանդակության վերաբերյալ, մասնավորապես՝ մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության հնարավոր ազդեցությունների մասին:

Ուսումնասիրության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ԱՃԹՆ պաշտոնական կայքի ու պետական, ՏԻՄ մարմինների և այլ կառույցների պաշտոնական կայքերում առկա, ինչպես նաև «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից տարբեր պատկան մարմիններին ուղղված տեղեկատվության ստացման հարցումների պատասխանները և ծրագրի շրջանակներում համայնքներ այցելությունների ընթացքում բնակիչների հետ շփումների, տեղերում խնդիրներին առնչվելու արդյունքում ի հայտ եկած հանգամանքները, ինչպես նաև տարբեր օրենսդրական փաստաթղթեր: Սոցիալական և բնապահպանական իրավիճակի գնահատման համար հիմք են հանդիսացել նաև ՀՀ Լոռու մարզի մի շարք համայնքերում ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի, չեխական «Արնիկա» քիմիական անվտանգության կազմակերպության կողմից կատարված հետազոտությունները, որոնց արդյունքում ծանր մետաղների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների զգալի գերազանցումներ են հայտնաբերվել ոչ միայն հողի և ջրի նմուշներում, այլ նաև երեխաների արյան մեջ և մազերում:

1. Ընդերքօգտագործումը ՀՀ Լոռու մարզում. պատմական ակնարկ

Հայկական լեռնաշխարհում գունավոր մետաղների ձուլումը հայտնի է եղել մ.թ.ա. III-II հազարամյակում (Մեծամոր), մշակվել են պղնձի, անագի, ոսկու հանքավայրեր (մ.թ.ա. IV-III դդ.): Պղնձի, ոսկու, բազմամետաղային հանքանյութերի մշակումը, երբեմն տևական ընդմիջումներով, շարունակվել է միջին դարերում և առավել բարձր զարգացման հասել XVIII դարի II կեսին, երբ 1763թ. Ախթալայի արծաթ-կապարի և 1770թ. Ալավերդու պղնձի հանքավայրերի բազայի վրա կառուցվեցին Ախթալայի արծաթ-կապարի և Ալավերդու, այնուհետև Շամլուղի պղնձաձուլական գործարանները:

1785. և 1795թթ. հանքն ավերվել է և փակվել: Հետագայում այն վերականգնել են հույն հանքափոր վարպետները, որոնք եկել էին Հերակլ II թագավորի օրոք, դեռևս 1760-ական թվականներին: 1887-1914թթ. հանքավայրը շահագործել են ֆրանսիացի ձեռնարկատերերը:

1905թ. դադարեցվել էր Ախթալայի արծաթ-կապարի հանքավայրի մշակումը պաշարների սպառման պատճառով:

1918-1920թթ. Հայաստանում գործող ձեռնարկությունների զգալի մասն ավերվել էր: Հեղկոմի 1921թ. հունվարի 11-ի դեկրետով երկրի հանքային արտադրությունն ու մետալուրգիական գործարանները ազգայնացվեցին: 1924թ. սկսեցին գործել Ալավերդու, Ղափանի պղնձաձուլական գործարանները, 1927 թվականին՝ Շամլուղի, Ալավերդու և Ղափանի հանքերը:

1960-1985թթ. ՀՍՍՀ գունավոր մետալուրգիան մեծ առաջընթաց ապրեց: 1967թ. գործարկվեց Ախթալայի հարստացման ֆաբրիկան:

1971-1975թթ. Շամլուղի պղնձի, Ախթալայի արծաթ-կապարի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկան ընդգրկվեցին Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի կազմի մեջ: Այժմ վերագործարկվել է Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան[1]:

Այս՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում է գտնվում նաև Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը, որը պաշարների մեծությամբ Հայաստանում երկրորդն է՝ Քաջարանի հանքավայրից հետո: Հանքավայրի հայտնաբերմանը հանգեցրած երկրաբանա-հետախուզական աշխատանքները սկսվել են դեռևս 1972 թ.: Հետախուզական հորատումներ և այլ երկրաբանական աշխատանքներ են իրականացվել շուրջ 20 տարի: Դրանց արդյունքում որոշվել են հանքային մարմնի սահմանները, Խորհրդային Միության պաշարների պետական հանձաժողովի կողմից 1991թ. հաստատվել է շուրջ 454 մլն տոննա հանքաքարի պաշար՝ 1.6 մլն տոննա (0.355%) պղնձի և 99 հազար տոննա (0.022%) մոլիբդենի պարունակությամբ[2]:

Նախագծային և շինարարական ծավալուն աշխատանքներից հետո հանքավայրը սկսել է շահագործվել է 2014 դեկտեմբերի 20-ին՝ «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից, որը հիմնադրվել է 2006 թվականին: Արտադրական ծավալների հիման վրա, շահագործման

[1] www.akhtala.am
[2] http://teghout-old.vallexgroup.am/hy

առաջին իսկ տարվա ընթացքում այն դարձել է ՀՀ-ում գործող պղնձի երկրորդ խոշորագույն հանքավայրը: Նախագծի մասին առավել մանրամասն ներկայացված է հաջորդ պարագրաֆում:

«Թեղուտ» ՓԲ ընկերությունը հանդիսանում է Վալլեքս Ընկերությունների խմբի մաս, որն արտադրական և գիտատեխնիկական ակտիվներով ապահովում է ոչ միայն պղնձի և մոլիբդենի խտնայութերի արտադրությունը՝ այլև իրականացնում է պղնձի արտադրության գրեթե ամբողջական փուլը՝ հանքաքարի վերամշակումից մինչեւ սև պղնձի արտադրություն և վաճառք:

«Թեղուտ» ՓԲ Ընկերության արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան կտրվածքով արտադրել ավելի քան 100.000 տոննա պղնձի, և ավելի քան 1.000 տոննա մոլիբդենի խտանյութ:

Հանքավայրի օքսիդացման գոտում առկա է նաև փիրուզային հանքայնացում: Համաձայն ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի համապատասխան արձանագրության՝ փիրուզի պաշարները կազմում են մոտ 100 տոննա:

2018թ. հունվարի 12-ից դադարեցվել է Թեղուտի հանքավայրում պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունը, որը ըստ տարբեր աղբյուրների կապված է ֆինանսական խնդիրների հետ:

2005-17թթ ժամանակաշրջանում «Մուլտի գրուպ» ընկերությունը, համաձայն ՀԱ-Լ-14/404 հանքային իրավունքի[3], ձեռնարկել է Մղարթի ոսկու հանքավայրի շահագործումը, ՀՀ Լոռու մարզի Մղարթ գյուղում: Հանքաքարի արդյունահանումը կատարվում է բաց եղանակով: Բացիանքին հարող տարածքում կառուցվել է ոսկու կորզման մինի ֆաբրիկա տարեկան 50 հազար տոննա արտադրողականությամբ:

Արդյունահանման աշխատանքներին զուգահեռ կատարվել է հանքավայրի լրահետախուզում և օգտակար հանածոյի պաշարների վերագնահատում, որի արդյունքում հայտնաբերվել և հետախուզվելեն նոր հանքային մարմիններ :

2005-2013թթ. ժամանակաշրջանում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների հիման վրա կատարվել է հանքավայրի կենտրոնական տեղամասի պաշարների վերագնահատում:

[3] Տեղեկանք Օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված հանքային իրավունքների մասին առ 01. 10.2012 թ. Դրությամբ https://www.e-gov.am/u_files/file/Energetika-ynderq/Yynderqogtagorcum.pdf

2. Ախթալա, Ալավերդի, Շնող, Օձուն համայնքներում մետաղաձուլական և հանքարդյունաբերության հետևանքներից ազդեցություն կրող համայնքների սոցիալական ու բնապահպանական հիմնախնդիրները (ամփոփ նկարագիր).

Գծապատկեր 1[4]**.** Լոռու մարզի ակնարկային հանքավայրերի քարտեզը

«Ալավերդի-Շամլուղ-Ախթալա» միացյալ հանքային դաշտը գտնվում է Ալավերդու հանքային շրջանում, վարչականորեն՝ Լոռու մարզում, Հարավկովկասյան երկաթգծի Ալավերդի և Ախթալա կայարանների միջև:

Տվյալ տարածաշրջանում զարգացած է հանքարդյունաբերությունը: Թեղուտի պղինձ--մոլիբդենային հանքավայրի հանքաքարի պաշարների հենքի վրա գործում են «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատը»: Հայտնի են մի շարք մետաղական հանքավայրեր. Ալավերդու

[4] *Աղբյուրը՝ Շամլուղի պղնձի հանքավայրի արդյունահանման նախագիծ*

և Հանքաձորի պղնձի, Արմանիսի ոսկի-բազմամետաղային, Ախթալայի բազմամետաղային, Մղարթի ոսկու և այլ հանքավայրերը: Ոչ մետաղական հանքավայրերից են՝ Թումանյանի հրակայուն և Աթանի խեցեգործական կավերի, Փամբակի մուգ-մոխրավուն մոնցոնիտների և այլ հանքավայրերը:

Շամլուղի պղինձի հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Շամլուղ գյուղի մոտ, Ախթալա գետի ավազանում, Ախթալայի կայարանից 5կմ, Ալավերդի քաղաքից 28կմ հեռավորության վրա: Այլ մոտակա բնակավայրերն են Բենդիկը (3կմ) և Վերին Ախթալան (5կմ): Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Ախթալա կայարանից 2 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք:

Շամլուղի պղինձի հանքավայրը շահագործվում է «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից[5] :

Ախթալայի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկան, ներկայումս հանդիսանում են այս տարածաշրջանի շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրը:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ներքաղաքային ճանապարհների վերանորոգումը, դպրոցի և դպրոցական գույքի վերանորոգումը, ոռոգման և խմելու ջրի ջրագծերի, փողոցների գիշերային լուսավորության հարցը: Առաջնային է համարվում նաև մշակութային կոթողների վերանորոգումը:

Ախթալա խոշորացված համայնքը ձևավորվել է 2017 թվականի հունիսի 9-ին և իր մեջ ներառում է Ախթալա և Շամլուղ քաղաքները և Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց և Փոքր Այրում գյուղերը: 2018թ.-ի տվյալներով Ախթալա խոշորացված համայնքի բնակչությունը կազմում է կազմում է 7439 մարդ[6] :

Շրջակա միջավայրի համար լուրջ սպառնալիք են հանդիսանում Ախթալայի տարածքում գտնվող 3 պոչամբարները, որոնցից մեկը ռեկուլտիվացված է, մյուսը սառեցված, 3-րդը գործող: Առկա են նաև մի քանի վտանգավոր թափոնատեղեր, որոնք լուրջ սպառնալիք են հանդիսանում Ախթալայի գետակի, որի արդյունքում նաև Դեբեդ գետի, ինչպես նաև տնամերձ հողամասերի համար:

Դրանք հիմնականում Սվինեց թաղամասում գտնվող Նազիկ պոչամբարից 2001-2002 թթ. կառուցված 16 000 խ/մ պոչատարն է, որը տեղափոխվել և դատարկվել է անմիջապես Ախթալա վտակի ափամերձ տարածքում, ինչպես նաև Ախթալա-Այրում ճանապարհի աջ կողմում տեղադրված 95 000 խ/մ պոչանքը, որը 2007-2008թթ. դատարկվել է «Պայթուցիկ նյութերի ձոր» կոչվող հատվածում գտնվող պոչամբարից:

Կոմբինատի առաջին պոչամբարը, որը կոչվում է «Նազիկ» գտնվում է քաղաքի կենտրոնում, եկեղեցու՝ XIII դարի Ախթալայի պատմամշակութային վանական համալիրի

---

[5] *ընդերքօգտագործման պայմանագիր օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, պայմանագիր՝ N ՊԿ-103, 20 հոկտեմբեր 2012թ., ստորագրված ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և* «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-*ի միջև*

[6] http://mtad.am/hy/18hamynqner/

տակ, այն ռեկուլտիվացված է, իսկ «Պայթուցիկ նյութերի ձոր» կոչվող հատվածում գտնվող պոչամբարը կոնսերվացված է: Սակայն թե ռեկուլտիվացման, թե կոնսերվացման գործընթացները արդյունավետ չեն իրականացվել, հողի շերտը շատ բարակ է և պոչանքները անձրևաջրերի հետ թափվում են Ախթալա գետը:

Ախթալա ԼՀԿ-ի հիմնական «Նահատակ» պոչամբարը նախագծվել և կառուցվել է 1965-1970թթ. գոյություն ունեցող տեխնիկական, բնապահպանական և տնտեսական չափանիշներին համապատասխան: Այն գտնվում է Ախթալա քաղաքից 8 կմ հեռավորության վրա: Պոչամբարի աշխատանքները 1989թ.-ին դադարեցնելուց հետո վերսկսել է 2011 թվականին՝ անցնելով բնապահպանական և տեխնիկական համապատասխան փորձաքննություններ: Սակայն քանի որ պոչամբարը արդեն խորհրդային տարիներից սկսած լցված էր և երկար չէր կարող ծառայել, իսկ ընկերությունն արդեն իսկ ուներ կոնսերվացված 2 պոչամբար և այլ տարածք չկար պոչանքները թափելու համար, ուստի ընկերությունը որոշեց Մեծ Այրումի և Ճոճկանի շուրջ 40 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը վերցնել և նոր պոչամբար կառուցել: Սակայն դրան տեղի բնակչությունը դեմ արտահայտվեց, քանի որ տեսել էին արդեն գործող պոչամբարի բացասական հետևանքները և թույլ չտվեցին նոր պոչամբարի կառուցումը:

Այնուհետև 2017թվականին ընկերությունը Շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության ներկայացրեց «Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման աշխատանքային նախագիծը», համաձայն որի կոմբինատի խտացված և ջրազրկված պոչերը պետք է պահեստավորվեն բացահանքի արդյունահանված տարածքում:

Համաձայն նախագծի, կիրառվող տեխնոլոգիայի շնորհիվ պոչերը խտացումից հետո ենթարկվում են ջրազերծման, մինչև 8-10% խոնավությամբ մամլազտիչի կիրառմամբ: Առաջարկվող համակարգը թույլ է տալիս լիովին հրաժարվել պոչամբարից և շրջանառու ջրի մատակարրարումը հասցնել մինչև 91%: 2017թ. նոյեմբերի 14-ին նախագիծը ստանում է դրական եզրակացություն[7] : Նախագծի համապատասխան Նահատակ պոչամբարի մնացորդային ծավալը հնարավորություն կտա ևս մեկ տարի շահագործել հարստացուցիչ ֆաբրիկան: Այնուհետև պետք է անցնեն պոչերի չորացման եղանակին, իսկ պոչամբարը պետք է ռեկուլտիվացվի:

«Շամլուղի ստորգետնյա հանքի վերազինում մինչև 500.0 հազ.տ/տարի արտադրողականությամբ» աշխատանքային նախագծի համաձայն[8] , նախատեսվում է իրականացնել Նահատակ պոչամբարի ռեկուլտիվացիա, որի ժամկետը ըստ նախագծի 2.5 տարի է (29.3 ամիս): Ըստ ժամանակացույցի աշխատանքները պետք է սկսվեն 01.10.2018թ· և ավարտին հասցնել 01.03.2020թ.:

[7] http://mnp.am/uploads/1/1517819740100-Axtala-poch1.pdf
[8] http://www.mnp.am/am/pages/230

Մեր ունեցած տեղեկություններով ներկայումս ընկերությունը դեռևս փորձարկում է պոչերի խտացման և չորացման տեխնոլոգիան, իսկ ռեկուլտիվացիոն աշխատանքները չեն մեկնարկել:

ՀՀ Կառավարության 2006 թվականի N 47-Ն որոշման համաձայն կանոնակարգվում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից վտանգավոր թափոնների անձնագրի կազմման, համաձայնեցման և հաստատման հետ կապված հարաբերությունները:

Ախթալա ԼՀԿ-ն ըստ 2018թ. տվյալների ունի Շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վտանգավոր թափոնների 10 անձնագրիր[9]:

Թափոնի անձնագիրը կազմվում է ըստ թափոնի տեսակի, հաշվի առնելով թափոնների քանակությունը, կազմը և դրա բաղադրիչների թունունակությունը, հրդեհապայթունավտանգությունը և այլն:

Վտանգավոր թափոնների անձնագրավորումն իրականացվում է ռեսուրսների խնայողության ու վտանգավոր թափոնների անվտանգ գործածությունն ապահովելու նպատակով և հիմք է հանդիսանում անձնագրավորվող թափոնների հետ կապված տեխնոլոգիական, տնտեսական, իրավական և այլ որոշումների ընդունման համար, մասնավորապես, կապված շրջակա միջավայրի պահպանության պահանջների կատարման, թափոնների անդրսահմանային փոխադրման կարգավորման, թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարի օբյեկտ հանդիսացող ծավալների հաշվառման և (կամ) հաշվարկման, ինչպես նաև բնապահպանական իրավախախտումների համար համապատասխան պատժամիջոցների կիրառման, արտադրանքի արտադրության համար որպես երկրորդային հումք թափոնների օգտագործման անհրաժեշտ և նպատակահարմար միջոցների ձեռնարկման, թափոնների վերամշակման նպատակահարմարության հետ և այլն:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների» օրենքի համաձայն՝ հատուկ հատկացված տեղերում (բացառությամբ արդյունաբերական հրապարակների) շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի սահմանված կարգով տեղադրման (պահման) համար բնապահպանական վճարի դրույքաչափերը առաջին դասի վտանգավոր թափոնների համար կազմում են 48 հազար դրամ մեկ տոննայի համար: Համաձայն նույն օրենքի բնապահպանական վճարները ներառում են վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու, արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու և շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար կատարվող վճարները:

Համաձայն ՊԵԿ-ի ներկայացված հաշվետվության Ախթալա ԼՀԿ-ն 2017թ. վճարել է 1,855,274 ՀՀ դրամ բնապահպանական վճար: Որքա՞ն մասն է այդ գումարից կազմում թափոնների տեղադրման վճարները, ցավոք հնարավոր չէ պարզել, քանի որ միայն

[9] http://mnp.am/am/pages/207

ընդհանուր բնապահպանական վճարների չափն է նշված հրապարակային հաշվետվություններում:

Պոչամբարները երկար տարիներ համարվել են տեխնածին հանքավայրեր և ազատվել են վտանգավոր թափոնների տեղադրման համար սահմանված բնապահպանական վճարներից:

2016թ. ընդունված ՀՀ հարկային օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետով ըստ վտանգավորության դասի, սահմանվեցին դրույքաչափեր ընդերքօգտագործման թափոնների համար՝ յուրաքանչյուր տոննայի համար 8-250 դրամ: Համաձայն օրենքի, այս հոդվածի կիրարկումը 2021թվականի հունվարի 1-ից է: Այդ դեպքում ինչպե՞ս պետք է վարվել մինչ այդ միլիոնավոր տոննաներով կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալների հետ, օրենքը չի կանոնակարգում:

Փաստորեն ՀՀ կառավարությունը տարիներ շարունակ թույլ է տվել պետության տարածքում մասնավոր ընկերությունների կողմից տեղադրելու բարձր վտանգավորության դասի թափոններ առանց դրանց դիմաց վճարման և դրանց հետագա կառավարման կամ չեզոքացման խնդիրները լուծելու:

«Մթնոլորտային օդի պահպանության» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն արգելվում է բնակավայրերում հանքակույտերի, լցակույտերի տեղադրումը, մթնոլորտային օդը փոշով, վնասակար նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող այլ թափոնների պահեստավորումը: Ախթալայի տարածքում գտնվող թափոնավայրերն ապացույց են այն բանի, որ խախտվում է վերոնշյալ օրենքը:

Շամլուղի հանքավայրի տարածքը գտնվում է Ախթալա գետի ջրհավաք ավազանում: Ախթալա գետը (հին անվանումը՝ Ուչքիլիսա կամ Ուչքիլիսաջուր գետ) հանդիսանում է Դեբեդ գետի վտակը: Այն սկիզբ է առնում Լալվար լեռան (2562 մ) հյուսիս-արևելյան լանջերից: Շամլուղի հանքավայրի շրջանում Ախթալա գետն ընդունում է Բողաքար, Շամլուղ, Քարաբա և Հոքնաց-Բուլաղ փոքր վտակները:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության» ՊՈԱԿ-ի[10] տվյալների Ախթալա գետն ունի բարձր աղտոտվածություն՝ 5-րդ դասի: Այստեղ դիտարկվում են ծանր մետաղների՝ ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, սուլֆատ իոնի 5-րդ, մոլիբդեն, կոբալտի 4-րդ և ամոնիումի, երկաթ կալցիումի, բերիլիումի 3-րդ դասի աղտոտվածություն (2017թ.-ի տարեկան տվյալներ):

Շամլուղ բնակավայրում, ծրագրի շրջանակներում իրականացված քննարկումների ժամանակ, բնակիչներն առաջին անգամ բարձրաձայնեցին գլխացավերից և նրանց կարծիքով դա պայմանավորված է պոչանքի գետը լցվելու հանգամանքի հետ:

[10] www.armmonitoring.am

Համաձայն Շամլուղի ստորգետնյա հանքի վերազինման նախագծի [11] շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ֆաբրիկայի աշխատանքը նախատեսված է լրիվ շրջանառու համակարգով, հոսքաջրերի արտահոսքը դեպի Դեբեդ գետը բացառվում է: Կոմբինատի ազդեցության տակ են միայն Ախթալա գետը՝ ներքին հոսանքում, երկու գետահատածքներում.

-գետաբերանից 4կմ հեռավորության վրա գետ են թափվում ստորգետնյա հանքի ջրերը:

-գետաբերանից 2կմ հեռավորության վրա, որտեղ Ախթալա գետ են թափվում ֆաբրիկայի սարքավորումների հովացման ջրերը, այդ ջրերը մաքուր են և գետը չեն աղտոտում:

Ցավոք սրտի տարիներ շարունակ Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից չվերահսկվող արդյունաբերական արտահոսքերը Ախթալա քաղաքում և շրջակայքում դառնում են աղտոտման վտանգավոր աղբյուրներ: Թունավոր հոսքերը լցվում են Ախթալա գետ, տարածվում շրջակա միջավայրում, որոնց պատճառով Ախթալա գետը նման է պոչատարի:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն, ակտիվ հասարակական գործունեություն ծավալելով մարզում, բազմիցս է ահազանգել և պատկան մարմինների ուշադրությունը հրավիրել այս խնդրին: Ահազանգից հետո հարցին ժամանակավոր լուծում է տրվում, իսկ հիմնահարցը մնում է անփոփոխ:

«ԷկոԼուր» ՀԿ-ի կողմից իրականացվող «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» ծրագրի շրջանակներում իրականացված հարցազրույցներում Ախթալայի ԼՀԿ-ի գործունեության արդյունքում բնության ու մարդկանց վրա սոցիալական ազդեցությունները բացասական են գնահատում Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում բնակավայրերի բնակիչները: Հատկապես մեծ են դժգոհությունները օդի աղտոտվածությունից և գյուղատնտեսական նշանակության հողերի քանակի կրճատումից, գյուղատնտեսական արտադրանքի որակից:

Չեխական «Արնիկա» քիմիական անվտանգության հասարակական կազմակերպության և Պրահայի քիմիական-տեխնոլոգիական համալսարանի լաբորատորիայի, «Էկոլուր» և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ների մասնագետների կողմից «Քաղաքացիական հասարակության ներգրավումը Հայաստանում հանքարդյունաբերության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում» ծրագրի շրջանակում 2018թ.-ին իրականացված հետազոտությունների արդյունքներով Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Շնող համայնքներում հայտնաբերվել են ծանր մետաղների մեծ քանակություն՝ հողում, ջրում, սննդամթերքում, որոնք սպառնում են շրջակա միջավայրի պահպանությանը և մարդկանց առողջությանը: Հայաստանի ամերիկյան համալսարանի, ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տարբեր տարիների Ախթալա և Ալավերդի քաղաքների և շրջակա գյուղերի բնակելի շենքերի, տների, մանկապարտեզների և դպրոցների բակերում կատարած նմուշառումների

[11] http://www.mnp.am/am/pages/230

ուսումնասիրությունից հետո ահազանգել են՝ ծանր մետաղները սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները զգալի գերազանցում են ոչ միայն հողի և ջրի նմուշներում, այլ նաև երեխաների արյան մեջ և մազերում: Ախթալայում պղնձի պարունակությունները թույլատրելի նորմերը գերազանցել էին 108 անգամ, մկնդեղինը՝ 20, կապարինը՝ 4,6 անգամ:

Այսպիսով ելնելով վերոնշյալից, կարող ենք հետևություն անել, որ Շամլուղի պղնձի հանքավայրի և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ գործունեության հետևանքով վնասներ են պատճառվում շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն այս տարվա հունվարի 16-ից փետրվարի 4-ը ստուգում է անցկացրել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում: Դրա արդյունքում պարզվել է, որ ընկերությունը խախտել է օրենքի մի քանի պահանջներ:

ՀՀ ջրային օրենսգրքի 27-րդ, 37-րդ հոդվածների հետևյալ պահանջները.

- իրականացվել է ջրօգտագործման թույլտվությունից ավել ջրառ,
- սահմանված կարգով չի իրականացվել ջրառի հաշվառում,
- չի մշակվել արդիական տեխնոլոգիաների կիրառման ջրային ռեսուրսների մոնիտորինգ, բարելավող և աղտոտման նվազեցման, կանխման միջոցառումներ,
- չի մշակվել և իրականցվել ջրակորուստների կրճատման և նորմավորման ջրաքանակների արդյունավետ օգտագործման միջոցառումների ծրագիր,
- 2017 թվականի վթարի հետևանքով արտադրական հոսքաջրերն աղտոտել են 200 մ^2 հողային տարածք, ինչը ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պահանջով մաքրվել է:

Այսպիսով, նշված խախտումներն առաջացնում են շրջակա միջավայրին հասցված վնասի վերականգնում 5,003,974 ՀՀ դրամ և վարչական պատասխանատվություն՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

Բնակիչների հետ հանդիպումների ժամանակ, ի հայտ եկավ վերջիններիս անհանգստացնող ևս մեկ հանգամանք՝ Շամլուղի հանքավայրը ստորգետնյա շահագործմամբ հասել է Շամլուղ բնակավայրի վարչական տարածքը, հետևաբար պայթեցումների ժամանակ բնակիչների տների փլուզման վտանգ է առաջանում:

1899թ. Դեբեդ գետի ձախ ափի կիրճով անցնող Թիֆլիս-Ալեքսանդրոպոլ (Գյումրի) երկաթգծի կառուցման ավարտից հետո, պղնձաձուլական վերջին ենթակառուցվածքները կառուցվեցին Դեբեդ գետի կիրճում, որտեղ այժմ գտնվում է **Ալավերդու պղնձաձուլական գործարանը:**

Ալավերդի քաղաքի էկոլոգիական հիմնախնդիրները՝ իրենց բնույթով և չափերով, մեծ ազդեցություն ունեն նաև ողջ Հարավային Կովկասի էկոլհամակարգի վրա, քանի որ Ալավերդի քաղաքի տարածքով է հոսում անդրսահմանային Դեբեդ գետը և Ալավերդի

քաղաքի անտառները տարածվում են Վրաստան և Ադրբեջան՝ կազմելով մեկ ընդհանուր էկոհամակարգ:

2017 թ.-ին Ալավերդի քաղաքը խոշորացվել է՝ ընդգրկելով Աքորի, Հաղպատ, Ջիլիզա, Կաճաճկուտ, Ծաղկաշատ համայնքները: 2018թ.-ի տվյալներով Ալավերդու բնակիչների թիվը կազմում է 24599 մարդ:

Թեև ՀՀ առողջապահության նախարարությունը մարդու առողջության վրա ծանր մետաղների ազդեցության գնահատման որևէ հետազոտություն չի արել և Հայաստանն այսօր չունի հանրության առողջությանը պատճառող վնասի գնահատման հաշվարկման որևէ մեխանիզմ, հետևաբար ապացույցներ չկան այն մասին, որ հիվանդությունները հանքարդյունաբերության հետևանքով են առաջանում, բայց միայն պաշտոնական վիճակագրությունը այս տարածքների հիվանդացությունների վերաբերյալ, արդեն բացահայտում է այդ կապը: Առողջապահական համաշխարհային կազմակերպության տարեկան զեկույցների տվյալներով Հայաստանը առաջին երկրներից մեկն է քաղծկեղով մահացությունների դեպքերի թվով (2015թ.-ին՝ առաջին, 2016թ. 2-րդ տեղը Զիմբաբվեից հետո): Համաձայն տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացված հետազոտությունների, Հայաստանում Ալավերդու տարածաշրջանը զբաղեցնում է առաջին տեղը թե հիվանդացությունների թվով, այդ թվում քաղցկեղով հիվանդների, թե մեռելածինների, թե բնածին արատներով ծնված երեխաների թվով: Այսպես օրինակ՝ Առողջապահության ազգային ինստիտուտի (ԱԱԻ) վիճակագրությամբ 2017թ.-ին «Ալավերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ուռուցքաբանության կաբինետում գրանցվել են 794 չարորակ նորագոյացությունով հիվանդներ, որոնցից 165-ը մահացել են: Այս տարածաշրջանի հողի, ջրի, բանջարեղենի, մրգերի ու հատապտուղների, երեխաների արյան մեջ կապարի և այլ ծանր մետաղների քանակության վերաբերյալ Հայաստանի Ամերիկյան համալսարանի և ԳԱԱ էկոլոգանոոսֆերային կենտրոնի տվյալներն ապացուցում են, որ այս տարածաշրջանը գտնվում է շրջակա միջավայրի աղտոտվածության ու առողջապահական տեսանկյունից խիստ ռիսկային գոտում:

Ալավերդի քաղաքում տեղակայված պղնձաձուլական գործարանն ունի շուրջ 245 տարվա պատմություն: Գործարանի արտանետումները բացասական են ազդում շրջակա միջավայրի և քաղաքի ու հարակից համայնքների բնակիչների առողջության վրա:

ՀՀ-ում մթնոլորտային օդի մոնիտորինգ է իրականացնում ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ն [12], որը պաշտոնապես հրապարակում է արտանետումների միայն ամսական միջինացված տվյալները: Համաձայն այդ տվյալների 2017 թվականի ընթացքում Ալավերդի քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Ծծմբի երկօքսիդի և ընդհանուր փոշու միջին տարեկան կոնցենտրացիաները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները 2.3 և 1.7 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն չի գերազանցել:

[12] www.armmonitoring.am

Ստորև ներկայացված է մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (պասիվ նմուշառում).



Գծապատկեր 2



Գշապատկեր 3

Քանի որ պաշտոնապես հրապարակվում են միայն ամսական միջինացված տվյալներ, միանգամայն պարզ է, որ ամսվա մեջ որոշակի օրերի, կամ օրվա որոշակի ժամերի արտանետումները շատ ավելի բարձր, կամ գերբարձր են լինում: Բացի հիմնական արտանետումներից, շատ հաճախակի գործարանում տեղի են ունենում վթարներ, որոնց ժամանակ կրկին գերարտանետումներ են լինում, որոնք կյանքի համար վտանգավոր են:

«Արնիկա» քիմիական անվտանգության հասարակական կազմակերպության և Պրահայի քիմիական–տեխնոլոգիական համալսարանի մասնագետների 2018թ-ի ուսումնասիրության համաձայն՝ Ալավերդու մանկական խաղահրապարակների ավազի փորձանմուշներում հայտնաբերվել է բարձր աղտոտվածություն պղնձով (մինչեւ 5200 մգ /կգ), մկնդեղով (140 մգ /կգ), ցինկով (1200 մգ/կգ) և կադմիումով (3.7 մգ/կգ): Ալավերդու պղնձաձուլարանի մոտակայքում գտնվող այգիների հողերում տագնապալի է պղնձով (մինչև 1900 մգ /կգ), մկնդեղով (մինչև 80 մգ /կգ) և ցինկով (մինչև 1800 մգ / կգ) աղտոտվածությունը՝ համեմատած հեռավոր վայրերի հետ: Ալավերդու ճանապարհներին փռված խարամում, որը նաև կայուն օրգանական աղտոտիչների՝ դիօքսինների պոտենցիալ աղբյուր է, հայտնաբերվել են ծանր մետաղների բարձր կոնցենտրացիաներ՝ պղինձ՝>9000 մգ/կգ, մոլիբդեն՝ >1600 մգ/կգ, ցինկ՝ >900 մգ/կգ [13]:

2018թվականի օգոստոսին բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից Ալավերդու պղնձաձուլական գործարանում կատարած ստուգումների արդյունքում, գործարանը տուգանվել է 380 մլն դրամով, որը հաշվարկվել է որպես շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ կառավարության որոշումներով սահմանված շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների պատճառված վնասի հաշվարկի համաձայն: Ցավոք, կատարված հաշվարկում հանրության առողջությանը պատճառած վնասը հաշվարկված չէ, քանի որ չկա հանրության առողջությանը պատճառող վնասի գնահատման հաշվարկման որևէ մեխանիզմ:

Տուգանվելուց հետո, գործարանը, հայտնվելով ֆինանսական ճգնաժամի մեջ, կասեցրել է աշխատանքները: Պղնձաձուլարանն ներկայումս չի գործում, բայց աշխատանքներ են տարվում տեխնոլոգիական հնարավոր լուծումներ և ներդրողներ գտնելու ուղղությամբ:

Հարկ է նշել, որ գործարանի աշխատանքի դադարից հետո էապես բարելավվել է Ալավերդի քաղաքի և հարակից բնակավայրերի շրջակա միջավայրի վիճակը, սակայն միևնույն ժամանակ գործարանի չաշխատելը բացասական է ազդում բնակիչների սոցիալական իրավիճակի վրա: Խնդրի լուծման ճանապարհը մեկն է՝ միայն լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառմամբ վերագործարկում:

Ըստ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքի՝ գործարանը շահագործող «Արմենիան Քափր Փրոգրամ» ընկերությունը պարտավորվել է արտանետումների համապատասխան թույլտվություն ստանալ՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր:

[13] "Heavy metals in the surroundings of mining and metallurgical sites in the Lori region in Armenia", Author: Martin Bystrianský, Contributing authors: Marek Šír, Jitka Straková, Nikol Krejčová, https://www.ecolur.org/files/uploads/armeniaheavymetalsajweb.pdf

Կառավարության դիրքորոշման համաձայն՝ միայն հստակ ծրագիր ունենալու դեպքում կտրամադրվի արտանետումների հետ կապված արտոնություն:

Ալավերդի քաղաքից 32 կմ արևելք՝ Թեղուտ գյուղի շրջակայքում է գտնվում **Թեղուտի պղինձ մոլիբդենային հանքավայրը**, որը շահագործվում է «Թեղուտ» ՓԲԸ ընկերության կողմից[14] :

ՀՀ Կառավարության 2007թ.-ի նոյեմբերի 1-ի, 1278 – Ն որոշման համաձայն՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով, փոփոխվել են Թեղուտ և Շնող գյուղական համայնքների (Շնող խոշորացված համայնք) հողերի նպատակային նշանակությունները և ոչնչացվել են հարյուրավոր հեկտարներով դարավոր, կուսական անտառներ: Հետագա տարիներին ձախողվել են որպես փոխհատուցում իրականացվող անտառատնկման աշխատանքները, որոնք պետք է իրականացվեին հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման ծրագրի համաձայն: Ակնառու են հանքավայրի շահագործման ազդեցությունները՝ Շնող գետի ջրերի աղտոտում ծանր և վտանգավոր մետաղներով, սխալ կառուցված պոչամբարից մշտական արտանետումներ բնական միջավայր, աղտոտված ջրերի անվերահսկելի բացթողումներն անմիջապես Դեբեդ գետ և այլն, սոցիալական ծանր իրավիճակ Շնող և Թեղուտ համայնքներում՝ գյուղատնտեսական հողատարածքների քանակի և արտադրանքի որակի, բնակչության առողջության վատթարացում, արոտավայրերի կորուստ, որով պայմանավորված բնակիչները զրկվել են եկամտի աղբյուրից, նախկինում ունեցած անասնապահության, հացահատիկների, բանջարաբոստանային կուլտուրաների արտադրանքի հնարավորություններից:

Շնող խոշորացված համայնքը կազմված 3 բնակավայրերից՝ Շնող, Թեղուտ և Քարկոփ: Համայնքի վարչական տարածքը կազմում է 9438,45 հա, բնակիչների թիվը՝ 4111 մարդ: Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ: Բնակչության մեծ մասը աշխատում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում: Համայնքի հիմնախնդիրներն են՝ կոյուղու ցանցի բարեկարգման, լուսավորության համակարգի արդիականացման, ճանապարհների բարեկարգման և նորոգման, մանկական խաղահրապարակների ցանկապատման և նորերի կառուցման, Կանաչապատ տարածքների ստեղծման անհրաժեշտություն և այլն:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության» ՊՈԱԿ-ի տվյալների Շնող գետն ունի բարձր աղտոտվածություն՝ 5-րդ դասի: Այստեղ դիտարկվում են ծանր մետաղների՝ մոլիբդենի 5-րդ, նիտրիտ իոնի, երկաթի, սուլֆատ իոնի 4-րդ և պղինձի ու կալցիումի 3-րդ դասի աղտոտվածություն (2017թ.-ի տարեկան տվյալներ):

---

[14] *ընդերքօգտագործման պայմանագիր օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, պայմանագիր՝ N ՊՎ-376, 20 փետրվար 2013թ., ստորագրված ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և «Թեղուտ» ՓԲԸ-ի միջև*

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն, բնապահապանական մի շարք ՀԿ-ներ և տեղի բնակչությունը անհանգստացած են և բազմիցս են ահազանգել հանքավայրի վնասակար ազդեցությունների հետևանքների վերաբերյալ, այդ թվում նաև Թեղուտի պոչամբարի փլուզման վտանգի մասին, որի պատճառ կարող են հանդիսանալ պոչամբարի պատերին առաջացած ճաքերը:

2018թ. հունվարի սկզբին «Թեղուտ» ՓԲԸ սեփականատեր «Վալեքս գրուպ» ընկերությունը հայտնում է, որ Թեղուտի հանքավայրում «պլանային-կանխարգելիչ վերանորոգման աշխատանքների նպատակով» դադարեցվել է պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունը: Այնուհետև հայտնի դարձավ, որ «Թեղուտ» ՓԲԸ-ի գույքը գրավադրված է ռուսական ՎՏԲ բանկում: Ներկայում ընկերությունը պատկանում է բանկին:

«Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի վերաբերյալ» գործի՝ բնապահպանական հանրային դատարանին «Վալլեքս» խմբի ընկերությունների նախագահ Վալերի Մեջլումյանի անունից ուղարկված պատասխանում այսպես է մեկնաբանվում հանքավայրի աշխատանքների դադարեցումը. « Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի կառուցման և պղինձ մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի հիմնական փուլն իրականացվել է «Վալլեքս» խմբի և ռուսական ՎՏԲ բանկի համատեղ ձեռնարկություն հանդիսացող «Թեղուտ Ինվեսթմենթս Լիմիթեդ» ընկերության կողմից «Թեղուտ» ՓԲ ընկերության կառավարման պայմաններում: Ինչպես հավանաբար Ձեզ արդեն հայտնի է մեր պաշտոնական հաղորդագրություններից, լեռնահանքային համալիրի շահագործման ընթացքում առաջացել է պոչանքային տնտեսության որոշ հանգույցների անվտանգության և հուսալիության բարձրացման անհրաժեշտություն, և շրջակա միջավայրի համար ռիսկերի կառավարելիության ապահովման նպատակով «Վալլեքս» խմբի ընկերությունները դադարեցնել են համալիրի գործունեությունը: Այդ իրավիճակում ՎՏԲ բանկը 2018թ. սեպտեմբերին տիրացել է «Թեղուտ» ՓԲ ընկերության բաժնետոմսերի ամբողջ փաթեթին և մեր գնահատմամբ դա արել է ոչ իրավաչափ ճանապարհով: «Վալլեքս» խումբն այդուհետ չունի իրավական հիմքեր «Թեղուտ» ՓԲ ընկերության անունից որևէ մեկնաբանություն ներկայացնելու շահագրգիռ հանրությանը»:

Ինչ պայմաններով է դադարեցվել և ինչպես են կրկին վերսկսվել աշխատանքները: Արդյո՞ք այս գործընթացներն իրականացվել են օրենսդրությամբ սահմանված կարգով: Եթե հանքավայրի աշխատանքները ժամանակավոր դադարեցվում են, ինչպե՞ս է կարգավորվում այս հարցը: Արդյո՞ք կարելի է համարել, որ հանքը սառեցվում է: Եթե այո, ապա սառեցման գործընթացը պետք է կատարվի համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվականի N 319-Ն որոշման, որը վերաբերվում է Օգտակար հանածոների արդյունահանման հետ կապված Լեռնային փորվածքների և կառույցների սառեցման կարգին, որով կարգավորվում են օգտակար հանածոների արդյունահանման հետ կապված լեռնային փորվածքների և դրանց գործունեությանն առնչվող կառույցների (այսուհետ՝ օբյեկտ) սառեցման հետ կապված հարաբերությունները:

Համաձայն այս կարգի օբյեկտի սառեցում է համարվում օգտակար հանածոների արդյունահանման հետ կապված աշխատանքների ժամանակավոր դադարեցումը (4-րդ կետ)։ Թեղուտի աշխատանքները ժամանակավոր դադարեցվել են, ուստի՝ տրամաբանական էր, որ այն պետք է անցներ սառեցման գործընթաց։

Համաձայն նույն կարգի Օբյեկտի սառեցում թույլատրվում է տեխնիկատնտեսական, բնապահպանական, լեռնաերկրաբանական կամ այլ պատճառներով հանքավայրի կամ դրա առանձին տեղամասի մշակման ժամանակավոր անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում։ Օբյեկտի սառեցման համար կազմվում է հանքի սառեցման նախագիծ, որը սահմանված կարգով ենթարկվում է բնապահպանական փորձաքննության։ Օգտակար հանածոներ արդյունահանող ընդերքօգտագործողն օբյեկտի սառեցման թույլտվություն ստանալու համար գրավոր դիմում է լիազոր մարմին։ Սառեցված օբյեկտում լեռնային աշխատանքները վերսկսվում են համապատասխան փորձաքննություններ անցած ընդերքօգտագործման թույլտվության անքակտելի մաս հանդիսացող օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի համաձայն, հանքի սառեցման նախագծում նշված ժամկետում՝ այդ մասին տեղեկացնելով լիազոր մարմնին։

Ինչպես տեղեկանում ենք, ընկերությունը դադարեցրել է հանքավայրի աշխատանքները և չի իրականացրել սառեցման գործընթաց։ Ամեն դեպքում «Թեղուտ» ՓԲԸ-ն պետք է գրավոր դիմում ներկայացներ լիազոր մարմնին հանքավայրի շահագործման գործունեությունը դադարեցնելու մասին, որը չի արվել։ Տվյալ դեպքում ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն բոլոր հիմքերն ու իրավասությունները ուներ ընկերությանը լիցենզիայից զրկելու, որը չի կատարվել։

2013թ. կնքվել է նոր պայմանագիր (աշխատանքային նախագծի փոփոխությամբ), տրվել են նոր թույլտվություններ և լեռնահատկացման ակտ, որոնց պարագայում Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի արդյունահանման ծրագիրը պետք է անցներ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր փորձաքննություն, ինչը չի արվել [15]։

Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության բացահայտմամբ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործվում է բոլորովին այլ աշխատանքային նախագծով՝ ոչ թե 2006 թվականին հաստատված ՇՄԱԳ-ով և Աշխատանքային նախագծով թույլատրված փորձաքննական դրական եզրակացության պայմաններով, այլ միանգամայն նոր՝ 2010 թվականին կազմված նախագծով, որը չի անցել օրենքով սահմանված ընթացակարգերը և չի ենթարկվել բնապահպանական փորձաքննության։

2010 թվականին «Արմենիան Քափըր Փրոգրամ» (ACP) ընկերությունը դիմել է միջազգային հեղինակավոր «Environmental Resources Management» ընկերության եվրասիական մասնաճյուղին (ERM Eurasia LTD), որպեսզի վերջինս իրականացնի Թեղուտի հանքավայրի շահագործման համար կազմված նախագծային փաստաթղթերի վերագնահատում (gap analysis)։ Նախագծային փաստաթղթերի վերագնահատում

[15] http://teghut.am/legal-processes-teghut/

իրականացնելիս՝ ERM-ը հիմնվել է ՀՀ օրենսդրությամբ, Համաշխարհային բանկի ստանդարտներով ամրագրված դրույթների և ստանդարտների վրա: Ընկերությունն իրականացրել է աշխատանքային նոր նախագծի և նախկինում հաստատված և միակ ՇՄԱԳ փորձաքննություն անցած՝ 2006թ. դրական եզրակացությամբ թույլտվության համեմատական և արձանագրել, որ

Համաձայն 2010 թվականին կազմված՝ Թեղուտի բացահանքի շահագործման նոր նախագծի՝ -ավելանալու է բացահանքի շահագործման խորությունը՝ 432 մետրից հասնելով 890 մետրի փոփոխվել են բացահանքի եզրագծերը.

-առաջանալու է թափոնների ավելի մեծ քանակություն, քան նախատեսված էր 2006 թվականին կազմված և փորձաքննության ներկայացված նախագծով.

-թափոնները տեղադրելու համար պահանջվելու են ավելի ընդարձակ տարածքներ, քան նախատեսված էր 2006 թվականին կազմված և փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ-ով.

-փոփոխվել են օժանդակ շինությունների տեղադիրքն ու այլ տեխնիկական պայմանները.

-փոփոխվել են հանքավայրի շահագործման այն չափորոշիչները, որոնք ներկայացված էին 2006 թվականին փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ-ում և այլն: Այս զեկույցը Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը հրապարակել է նախաձեռնության կայքում[16] և ներկայացրել պետական լիազոր մարմիններին, այդ թվում՝ Էներգետիկայի նախարարությանը, սակայն որևէ գործողություն դրա հիմքով չի կատարվել:

Այս և շատ այլ փաստերով Բնապահպանական հանրային դատարանը 2019թ.-ի մարտի 1-ին վճիռ է կայացրել այն մասին, որ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման թույլտվությունների տրամադրման և գործարկման ընթացքում թույլ տրված օրինախախտումները, որոնք տարածաշրջանում հանգեցրել են բնապահպանական աղետի և սոցիալ-տնտեսական ճգնաժամի, ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն և դիմել է դատախազություն Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման անօրինական թույլտվություններ տրամադրած և անօրինական հանքարդյունահանում իրականացնող պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական գործերի հարուցման և նրանց գործողությունների հետևանքով պետությանը և քաղաքացիներին պատճառած վնասների վերականգնման պահանջով[17]:

2019թ. հուլիսի վերջին «Վալլեքս» խումբը հայտարարեց Թեղուտի պոչամբարի հնարավոր ինքնափլուզման ռիսկի մասին՝ նշելով, որ ընկերությունը ներկայում Թեղուտի համալիրի նկատմամբ որևէ վերահսկողություն չունի և չի կարող պատասխանատու լինել դրա հետևանքների համար: Ընկերությունը նշեց, որ պոչամբարի խնդիրների մասին տեղյակ է պահել նաև կառավարությանը:

---

[16] http://teghut.am/2015/07/teghut-miningillegal/

[17] https://www.ecolur.org/files/uploads/2019/COURT%20DECISION%202019/publicenvironmentalcourtteghutfinal11032019.pdf

Այնուամենայնիվ, ս.թ. հուլիսի 9-ին Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը վերագործարկվեց: Ըստ Լոռու մարզպետարանի տվյալների՝ հանքավայրի շահագործման թույլտվություն ընկերությունը ստացել է հուլիսի 8-ին՝ տարեկան 7 միլիոն տոննա հանքաքար արտադրելու համար, ինչը ենթադրում է հանքավայրի 15-20 տարի շահագործման հնարավորություն:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի վերագործարկումը թեև սոցիալական հարց է լուծում համայնքում, այնուամենայնիվ այն պետք է աշխատի հասարակական վերահսկողության ներքո, շրջակա միջավայրի և մարդկանց առողջությանը հասցված վնասները պետք է կառավարելի լինեն:

2017թ.-ին ՀՀ Լոռու մարզի Օձուն, Ամոջ, Այգեհատ, Արդվի, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հագվի և Մղարթ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Օձուն համայնքը: 2018թ.–ի տվյալներով բնակչության թվաքանակը կազմում է 7986 մարդ:

Օձուն խոշորացված համայնքի Մղարթ բնակավայրում «Մուլտի գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն շահագործում է **Մղարթի ոսկու հանքավայրը**[18]:

Տարիներ շարունակ տեղի բնակչությունը ահազանգում է հանքավայրի շահագործման հետևանքով գյուղին հասցված վնասների մասին: Բնակիչների տեղեկացմամբ հանքավայրից գյուղին օգուտ չկա, այլ միայն վնասներ կան. փակվել են արոտավայրեր տանող ճանապարհները, հանքը նպաստել է արոտավայրերի չորացմանը, չորացել են նաև գյուղը խմելու ջրով սնուցող աղբյուրները և գյուղը զրկվել է խմելու ջրից, շրջակա միջավայրի համար վտանգ են ներկայացնում նաև Մղարթի ոսկու խտանյութի հարստացուցիչ կոմբինատը և պոչամբարները:

2018թ. ընկերությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի Մղարթի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի բաց լեռնային աշխատանքներով շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը 2018-2037 թվականների համար: Սակայն այն դրական եզրակացություն չի ստացել, քանի որ պոչամբարը և ֆաբրիկան եզրակացություն չեն ունեցել:

Մեր ունեցած տեղեկություններով, ներկայումս հանքավայրը չի աշխատում, սակայն չի ներկայացված հանքի սառեցման նախագիծ և չի ներկայացված դիմում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը հանքի աշխատանքների դադարեցման մասին:

Այս տարածաշրջանի համայնքները, այդ թվում՝ Արդվին, Մղարթը, Օձունը կտրականապես դեմ են իրենց տարածաշրջանում հանքարդյունաբերական ծրագրերին: Մինչ այդ «Միռամ» ՍՊԸ-ի կողմից ոսկու հետախուզման և դրան հաջորդող՝ ոսկու հավանական արդյունահանման դեմ դուրս եկան Օձունի խոշորացված համայնքի կազմի մեջ մտնող Արդվի գյուղի բնակիչները: Արդվեցիներին միացած մղարթցիներն ու օձունցիները բազմիցս

[18] *ընդերքօգտագործման պայմանագիր օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, պայմանագիր՝ N ՊՎ-213, 20 հոկտեմբեր 2012թ., ստորագրված ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և* «Մուլտի գրուպ Կոնցեռն» ՍՊԸ *-ի միջև*

արտահայտել են իրենց դիմադրությունը՝ կազմակերպելով ստորագրահավաք, ցույցեր, խափանելով պաշտոնական հանրային քննարկումները։

3. Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից մուտքերը պետական բյուջե

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարևոր մասնաբաժին ունի Հայաստանի տնտեսությունում: Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է պղնձով, մոլիբդենով, ոսկով և բազմամետաղներով (կապար և ցինկ), ինչպես նաև դրանցում առկա հազվագյուտ և ցրված մետաղներով: Ըստ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հրապարակած տեղեկատվության, օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է հաստատված պաշարներով օգտակար հանածոների ավելի քան 850 հանքավայր, ներառյալ՝ 42 մետաղական օգտակար հանածոյի հանքավայր:

Դրանցից ներկայում շահագործվում է շուրջ 400՝ այդ թվում՝ 28 մետաղական հանքավայր:

Հայաստանում գրանցված է 27 մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություն: Վերջիններիս գործունեության իրականացման շրջանակներում առկա է 28 թույլտվություն:

Թվարկված մետաղական հանքավայրերից 3-ը շահագործվում են Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում: Դրանք են Շամլուղի պղնձի հանքավայրը, որը շահագործվում է «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» (ԼՀԿ) ՓԲԸ-ի կողմից, Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը, շահագործվում է «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից և Մղարթի ոսկու հանքավայրը, որը շահագործվում է «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ-ի կողմից։

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունները պետական բյուջե են վճարում ավելացված արժեքի, ակցիզային և բնապահպանական հարկեր, ռոյալթի, մաքսատուրքեր, բնօգտագործման վճարներ և մի շարք այլ տեսակի հարկեր և վճարներ։ Պետական եկամուտների կոմիտեի տեղեկությունների համաձայն, 2016թ. մետաղական հանքարդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները կազմել են 51.1 մլրդ դրամ կամ ընդհանուր եկամուտների 4.4%-ը: 2017թ. մետաղական հանքարդյունաբերող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկվածհարկերը և վճարները աճել են՝ հասնելով մինչև 87.1 մլրդ դրամ կամ 7.1%[19]:

ԱՃԹՆ-ն պահանջում է եկամուտների տեղաբաշխումների հետ կապված տեղեկությունների բացահայտումներ, որոնք շահագրգիռ կողմերին հնարավորություն կտան հասկանալու, թե ինչպես են եկամուտները մուտքագրվում պետական և, կիրառելիության դեպքում, տեղական կառավարման մարմինների բյուջեներ:

[19] Տվյալներն ըստ ԱՃԹՆ զեկույցի

Սակայն Հայաստանի Հանրապետությունում, համաձայն պետական և համայնքների բյուջեների ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգման, բյուջեների կատարումն իրականացվում է միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա: Հետևաբար բյուջեի եկամուտների միասնականությունը անհնար է դարձնում ճշգրտել որևէ եկամուտի հետագա տեղաբաշխումը:

Սույն ուսումնասիրության հաջորդիվ բաժիններում ներկայացվում է ծրագրի թիրախ համայնքների բյուջեներ մետաղաձուլական և հանքարդյունաբերական գործունեություն ծավալող ընկերությունների կողմից կատարված վճարումներից հոսքերը՝ ընկերությունների կողմից պետական բյուջե բնապահպանական վճարների դիմաց կատարած վճարումներից մասհանումները ազդակիր համայնքային բյուջեներ, ընկերությունների կողմից համապատասխան համայնքային բյուջեներ կատարած տեղական հարկերը և այլ վճարները, ինչպես նաև սոցիալական պարտավորությունների ներքո կատարված վճարները: Ներկայացվում է նաև այդ գումարների հաշվին կատարված ծրագրերը և դրանց արդյունավետությունը:

3.1 «Ախթալայի ԼՀԿ» ՓԲ, «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊ ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները 2016-2018թթ.-ին, մլն. դրամ[20]

Աղյուսակ 1

Ընկերության անվանում/տարի	2016թ.	2017թ.
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	699	951.8
«Թեղուտ» ՓԲԸ	9,449	14,113.8
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	395	831.2

[20] Տվյալներն ըստ ԱՃԹՆ զեկույցի



Գծապատկեր 4

Ինչպես տեսնում ենք հարկերի և վճարների առումով Լոռու մարզում մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների մեջ առաջատար է «Թեղուտ» ՓԲԸ-ն, որի կողմից վճարված գումարները կազմում են՝ 0.9 մլրդ դրամ՝ 2016թ., և 14.3 մլրդ դրամ։

Եթե հաշվի առնենք, որ 2016թ.-ին մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները կազմել են 51,100 մլն. դրամ, ապա դիտարկվող երեք ընկերությունների կողմից կատարված վճարումները կազմում են ընդհանուր վճարների 20,6%-ը, 2017թ.-ի համար այդ թիվը կազմում է 18,26%, (2018թ-ի տվյալները բացակայում են)։

3. 2.1 «ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ-ի 2016 և 2017 թթ. գործունեության վերաբերյալ տեղեկատվությունն ըստ ընդերքօգտագործողի կողմից ներկայացված հրապարակային հաշվետվությունների և ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի

2017թ. տարեկան շրջանառությունը – 8 740 582 998 ՀՀ դրամ
Պետբյուջե վճարումներ.
2016 – 699 մլն ՀՀ դր;
2017 – 952 մլն ՀՀ դր
Աշխատատեղեր.
2016 – 396 մարդ; 2017 – 387 մարդ

3. 2.2 2016 -2017 թթ. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկեր, մաքսային վճարներ, տուգանքներ

Աղյուսակ2

տեսակ	2016 թ., ՀՀ դր	ՀՀ դր 2017 թ., ՀՀ դր
Շահութահարկ (ոչ ռեզիդենտի)	-	Վճր. 832 130
Եկամտահարկ	Հշվրկ. 319 898 229 Վճր. 39 317 188 Հաշվ. 288 241 530	349 130 062 238 286 378
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	Հշվրկ. 14 742 863 Վճր. 71 563 378 Վրդրձ. 28 476 651	17 695 120 70 729 678 635 016 715
Ակցիզային հարկ	-	Վճր. 299 952
Մաքսատուրք և այլն	Վճր. 12 192 000	21 629 875
Տույժ եր	Վճր. 15 645 695	321 379
Տուգանքներ	Վճր. 71 071 202	-

3. 2.3 2016 - 2017 թթ. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից վճարված ընդերքօգտագործման վճարներ[21]

Աղյուսակ 3

տեսակ	2016 թ., ՀՀ դր	ՀՀ դր 2017 թ., ՀՀ դր
Ռոյալթի	Հշվրկ. 261 977 208 Վճր. 58 576 651	535 815 687 203 300 000
Բնօգտագործման վճար	Վճր. 589 612	567 449

[21] Տվյալներն ըստ ԱՃԹՆ զեկույցի

Բնապահպանական վճարներ (հարկեր)	(հարկեր) Հշվրկ. 1 208 058 Վճր. 1 208 058	1 561 790 1 059 572
Բնապահպանական վճարներ (ներմուծում) ԵԱՏՄ երկրներից ԵԱՏՄ անդամ չհամարվ. երկրն.	Վճր. 69 206 Վճր. 278 271	62 692 364 636
ՇԱԹՎ Պետական տուրք	10 050 000	10 050 000
ՇՄՊ դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար Բազա յին չափը՝ 190 968 000 դր	Հշվրկ. 26 388 000 Վճարվել է 2018թ.-ին	32 466 000 Վճարվել է 2018-ի
Մշտադիտարկմ. իր. վճար Բազային չափը՝ 1 500 000 դր	Հշվրկ. 225 000 Վճարվել է 2018թ.-ին	255 000 Վճարվել է 2018-ին
ՇՄԱԳ փորձաքննություն Այդ թվում՝	Վճր. 25 140 000	7 200 000
Պոչամբարի բնապահպանական մասի նախագծի մշակում	8 100 000	-
Սահմանային թույլատրելի արտանետումների նախագծի մշակում	17 040 000	-
Պոչերի խտացման, զտման, տեղափոխման և պահեստավորման նախագիծ	-	7 200 000

Համաձայն ընդերքօգտագործման պայմանագրերի կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով պետք է վճարի բնության և շրջակա միջավայրի դրամագլխին և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով՝ մշտադիտարկումների վճար։ Ինչպես տեսնում ենք Ախթալա ԼՀԿ-ի ՇՄՊ դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարի բազային չափը կազմում է 190,968,000 դր, մշտադիտարկումներինը՝ 1 500 000 դր ։

Դրամագլխի և մշտադիտարկումների համար Շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցմամբ ընկերությունը վճարումներ կատարել է է 2018թ-ին։

2019թ ընդերքօգտագործման պայմանագրում տեղի է ունեցել փոփոխություն, որի համաձայն ավելացվել են պաշարները և շահագործման ժամկետը՝ 2007թ. տրվել է 15 տարի ժամկետով, 2019թ. պայմանագրային փոփոխության համաձայն սկսած 2019թ.-ից 10 տարի ժամկետով, այսինքն՝ պայմանագիրն վերջանում է 2029թ.: Ինչպես տեսնում ենք, փաստորեն երկարեցվել է պայմանագրի ժամկետը, սակայն փաստաթղթերից պարզ չի դառնում արդյոք փոփոխվել է մշտադիտարկման և դրամագլխի բազային չափերը:

3.3 2016 և 2017 թթ.-ին «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկեր, մաքսային վճարներ, տուգանքներ, ըստ ընդերքօգտագործողի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվությունների[22].

Աղյուսակ 6

տեսակ	2016 թ., ՀՀ դր	ՀՀ դր 2017 թ., ՀՀ դր
Շահութահարկ (ոչ ռեզիդենտի)	Հշվրկ. 158,806,798 Վճր. 41,435, 217	1,083,697,174 781,369,806
Եկամտահարկ	Հշվրկ. 1,874,943,589 Վճր. 1,792,500,000 Հշվնց. 5,736,687	1,954,607,818 1,770,000,000 142,893,630
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	Հշվրկ. 1,704,371,657 Վճր. 3,344,222,331 Հշվնց. – 289,807,932 Վրդրձ. 6,809,154,306 Տույժ 48,866,365	2,818,778,140 2,432,786,203 - 364,998,507 3,647,828,910 -
Ակցիզային հարկ	Հշվրկ. 2,447,842 Վճր. 2,588,122	677,487 1,034,910
Ռոյալթի	Հշվրկ. 5,189,215,503 Վճր. 7,861,915,487 Հշվնց. 284,042,245 Տույժ 11,816,030	5,790,867,042 6,131,042,500 144,028,156 -
Տուգանք (արտաբյջտ. հշվին)	-	11,985,640

[22] Տվյալներն ըստ www.eiti.am կայքի

Բնօգտագործման վճար	Հշվրկ. 4,243,407 Վճր. 4,182,416	4,136,446 4,170,436
Բնապահպանական վճարներ	Հշվրկ. 1 656 564 Վճր. 1 912 612	1,683,073 1,696,598
Բնապահպանական վճարներ (մաքսային)	Հշվրկ. 3,000,914 Վճր. 3,265,902	3,719,336 5,293,000
Պետ. տուրք	10,000,000	10,000,000
ՇՄՊ դրամագլուխ	2,953,000	2,953,000
Մշտադիտարկումների իրականացման վճար	0	0

Ինչպես տեսնում ենք ընկերությունը պարբերաբար վճարումներ է կատարել Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի վճարներ, որը կազմում է տարեկան 2,953,000 ՀՀ դրամ։ Այս գումարը նշված է նաև պայմանագրում։ Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրում նշված է նաև, որ ընկերությունը պարտավոր է կատարել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով՝ մշտադիտարկումների վճար։ Սակայն գումարի չափը չի նշված։ Ինչպես տեսնում ենք աղյուսակից ընկերությունը 2016-17թթ.-երին չի վճարել մշտադիտարկումների վճարները։ *Այստեղ կարող ենք փաստել, որ ընկերությունը պայմանագրի կետերի խախտում է իրականացրել։*

3.4 2017 թ. «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից վճարված հարկեր, մաքսային վճարներ, տուգանքներ, ըստ ընդերքօգտագործողի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվությունների[23].

Աղյուսակ 7

տեսակ	2017 թ., ՀՀ դր	ՀՀ դր 2016 թ., ՀՀ դր
Շահութահարկ (ոչ ռեզիդենտի)	Հշվրկ. 23,706,639 Վճր. Հշվնց. 23,461,885	-
Եկամտահարկ	Հշվրկ. 34,561,853 Վճր. 37,130,501 Հշվնց. 935,956	-
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	Հշվրկ. 78,061,820 Վճր. 15,940,948 Հշվնց. 137,067,229	-
Ակցիզային հարկ	Հշվրկ. 0 Վճր. 0	-
Ռոյալթի	Հշվրկ. 12,460,936 Վճր. 0 Հշվնց. 0 Տույժ	-
Տուգանք (արտաբյջտ. հշվին)	-	-
Բնօգտագործման վճար	Հշվրկ. 0 Վճր. 0	-
Բնապահպանական վճարներ	Հշվրկ. 0 Վճր. 0	-
Բնապահպանական վճարներ (մաքսային)	Հշվրկ. 15,315 Վճր. 15315	-
Պետ. տուրք	Հշվրկ. 10,000,000 Վճր. 10,000,000	-
ՇՄՊ դրամագլուխ	0	-
Մշտադիտարկումների իրականացման վճար	0	-

[23] Տվյալներն ըստ www.eiti.am կայքի

www.eiti կայքում բացակայում են «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի 2016թ. կատարված վճարումների մասին տվյալները

Աղյուսակ 7-ում բերված է ընկերության կողմից պետական բյուջե կատարված վճարումների մասին տեղեկատվությունը ըստ ընդերքօգտագործողի կողմից տրամադրված հրապարակային հաշվետվությունների:

Ինչպես տեսնում ենք 2017թ. շահութահարկ չի վճարվել, այս հանգամանքը նշումներում մեկնաբանվում է հետևյալ կերպ՝ քանի որ «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն ունեցել է գերավճարներ, հետևավաբար տվյալ տարվա ընթացքում վճարումներ չեն կատարվել, ճշտումը վերաբերվում է ոչ ռեզիդենտի շահութահարկին, որը ներառված չի եղել ընդհանրապես:

2017թվականին ռոյալթի նույնպես չի վճարվել և առկա է հետևյալ նշումը՝ քանի որ 2017 թվականի հաշվարկով առաջացած պարտավորությունը վճարվել (հաշվանցվել է) 2018 թվականի ապրիլ ամսին, իսկ նախորդ տարի ռոյալթի գծով պարտավորություն չի եղել, հետևավաբար 2017 թվականի ընթացքում վճարումներ չեն եղել, այդ պատճառով որպես Հաշվետու տարում վճարված ռոյալթի , արտացոլվել է 0 դրամ:

Դրամագլխի և մշտադիտարկումների համար նույնպես գումար վճարված չէ և այդ կապակցությամբ հաշվետվությունում առկա են հետևյալ նշումները՝ դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափը «նախագծով և (կամ) ծրագրով և (կամ) ընդերքօգտագործման պայմանագրով» սահմանված չէ: Ինչ վերաբերվում է փաստացի վճարումներին, ապա քանի որ առկա է մեծ գումարի չափով կանխավճար, այդ պատճառով ընթացիկ տարում փաստացի վճարումը բացակայում է: Հանքի փակման ծրագիր առկա չէ, հանքի փակման ծրագրով մշտադիտարկումների նախահաշվային արժեք սահմանված չէ:

Ընդեքօգտագործման պայմանագրում չի նշված բազային չափը, սակայն սահմանված են դրամագլխի նախնական հատկացումը՝ 94,725 հազար ՀՀ դրամ և դրամագլխի ընթացիկ հատկացումները 2006թվականից մինչև 2029 թվականը՝ յուրաքանչյուր տարի 233,381 հազար ՀՀ դրամ: Այստեղից դժվար չէ հասկանալ, թե ինչքան կկազմեր դրամագլխի բազային չափը: Իսկ մշտադիտարկումների վճարի մասով պայմանագրում նշված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով ընկերությունը պարտավոր է վճարել մշտադիտարկումների վճար:

Վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ ընկերությունը տարբեր պատճառաբանություններ է բերում դրամագլխի և մշտադիտարկումների վճարների մասով, իսկ փաստացի վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

4. Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ

Համայնքների բյուջեները ձևավորվում են համայնքի սեփական եկամուտներից, պետության կողմից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհներից, կապիտալ ներքին և արտաքին դրամաշնորհներից, նվիրատվություններից և փոխհատուցումներից:

Սեփական եկամուտները ներառում են հարկերը և տուրքերը՝

- Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար
- Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար
- Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝ գույքահարկ փոխադրամիջոցների համար
- Տեղական տուրքեր
- Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր
- Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից
- Վարչական գանձումներ, այդ թվում՝ աղբահանության վճարներ, համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ
- Այլ եկամուտներ

Ըստ ԱՃԹՆ-ի զեկույցի 2016թ. մետաղական հանքարդյունաբերողների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարումների կազմել է 1.2 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր եկամուտների 0.9%: 2017թ. համայնքային բյուջեների եկամուտներում հանքարդյունաբերական ընկերությունների հաշվարկված վճարումների մասնաբաժինը փոքր-ինչ աճել է՝ հասնելով մինչև 1.0% կամ 1.3 մլրդ դրամի:

4.1. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից ՏԻՄ վճարած հարկեր և վճարներ ըստ ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների

Աղյուսակ 4

Տեսակ/համայնք	2016 թ., ՀՀ դր	**2017 թ., ՀՀ դր**
Գույքահարկ (վճարված).		
Ախթալա հ/պ (ք. Շամլուղ)	121, 300	121, 300
Ախթալա հ/պ (ք. Ախթալա	1,903,714	1, 818, 934

Հողի հարկ (վճարված). Ախթալա հ/պ (գ. Նեղոց) Ախթալա հ/պ (ք. Ախթ.) Ախթալա հ/պ (ք. Շամլուղ) Ախթալա հ/պ (գ. Ճոճկան) Ախթալա հ/պ (գ. Այրում)	6,954 177, 160 16, 264 0 49, 380	
Վարձակ. վճար (անշարժ գույք) Ախթալա հ/պ (ք. Ախթ.) Ջրատար խողովակաշար	3, 600, 000 Համայնքի սեփ ականություն ջրատար խողովակաշար ի վարձավճար	3, 600, 000 Համայնքի սեփ ականություն ջրատար խողովակաշար ի վարձավճար
Վարձակ. վճար (հողամաս) Ախթալա հ/պ (ք. Շամլուղ)	3,943, 494	5, 149, 329
Ընդհանուր	9,818,266	10,689,593

Համաձայն ԱՃԹՆ անկախ ադմինիստրատորի զեկույցի Ախթալա համայնքի 2016թ.-ի իրական եկամուտները կազմել են 474,597 հազար ՀՀ դրամ և 2017թ-ին 167,669 հազար ՀՀդրամ[24] կատարված վճարները կազմում են 9,818,266 ՀՀ դրամ և 10,689,593 ՀՀ դրամ 2017թ-ի համար։

Այսպիսով հանքարդյունաբերական ընկերությունների կողմից կատարված վճարները կազմում են համայնքի ընդհանուր եկամուտների 2,1%-ը 2016թ.-ին և 6,3% 2017թ.-ին։

Համաձայն «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի Ախթալա համայնքապետարանին կատարված հարցման պատասխանի Ախթալա ԼՀԿ-ն 2018թ-ին վճարել է 8,309,255 ՀՀ դրամ, որպես գույքահարկ, հողի հարկ և Շամլուղ բնակավայրում վարձակալած հողի հարկ։ Համայնքի ղեկավարը տեղեկացրել է նաև, որ 12.04.2018թ.-ին «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի և Ախթալա համայնքապետարանի միջև կնքված պայմանագրի հիման վրա, կոմբինատը համայնքապետարանին վճարում է ամսական 5 մլն դրամ՝ Ախթալա համայնքի բարեկարգման և սոցիալական ծրագրեր իրականացման համար, որպես ֆինանսական աջակցություն։ Այսպիսով 2018թ-ի համար որպես սոցիալական աջակցության ծրագիր ընկերությունը համայնքին վճարել է 40,000,000 ՀՀ դրամ։ Այսպիսով Ախթալա համայնքի 2018թ.-ի մուտքերը Ախթալա ԼՀԿ-ի կողմից կազմել են 48,309,255 ՀՀ դրամ։ Եթե հաշվի առնենք, որ Ախթալա համայնքի բյուջեն 2018թ.-ին կազմել է 220,700 հազար ՀՀ դրամ[25],

[24] 2016թ. ՏԿԶՆ՝ որոշ մարզերի բյուջեների վերաբերյալ հաշվետվություններում համայնքների ցանկը թարմացված չէր՝ պայմանավորված 2016թ. իրականացված համայնքների խոշորացմամբ։ Այս պարագայում, խոշորացման գործընթացի արդյունքում ձևավորված համայնքների բոլոր մասնակից բնակավայրերի եկամուտները գումարվել են։) Ինչպես երևում է աղյուսակ 2-ից Ախթալա ԼՀԿ-ի կողմից 2016 թ.-ին Ախթալա համայքին (խոշորացումից առաջ ք. Ախթալա, գ.Նեղոց, ք. Շամլուղ, գ. Ճոճկան, գ. Մեծ Այրում համայնքներ

[25] Լոռու մարզպետարանի տվյալներ *www.mtad.am*

ապա հանքարդյունաբերական ընկերության կողմից մուտքերը համայնքի բյուջե կազմում են ընդհանուր բյուջեի 21,8%-ը:

Այսպիսով 2016-2018թթ. Ախթալա ԼՀԿ-ի կողմից հաշվարկված վճարումների չափաբաժինը Ախթալա համայնքի բյուջեներում, հետևյալն է՝



Գծապատկեր 5

Ինչպես տեսնում ենք 2018թ-ի ցուցանիշը զգալիորեն գերազանցում է 2016թ.-ի և 2017թ-ի ցուցանիշները: Ակնհայտ է, որ այս տարբերությունը պայմանավորված է կազմակերպության կողմից 5 մլն. դրամ յուրաքանչյուր ամսվա վճարի հետ, որը 2018թ-ին մուտք է եղել մայիս ամսից և տարեվերջին կազմել է 40 մլն ՀՀ դրամ:

Ախթալա համայնքի 2017թ. բյուջեով (մինչև խոշորացումը) Շրջակա միջավայրի պահպանության համար նախատեսված է եղել 8,372,000 ՀՀ դրամ, որը ամբողջությամբ նախատեսված է եղել միայն աղբահանության համար: Բյուջեի Շրջակա միջավայրի պահպանության ներքո հաջորդ տողերով՝ Կեղտաջրերի հեռացում, շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար, Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն, Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) նախատեսված է 0 դրամ:

Ուսումնասիրելով համայնքերի բյուջեները և դրանցով նախատեսված ծախսերը, նկատում ենք, որ համայնքները «Շրջակա միջավայրի պաշտպանությունը» պատկերացնում են միայն աղբահանություն, քանի որ նույն օրինաչափությունը կարելի է նկատել նաև այլ համայնքների բյուջեներում:

Հատկանշական է նաև այն փաստը, որ առողջական խնդիրներով «հարուստ» համայնքի բյուջեում Առողջապահական ծախսեր տողում 0.0 դրամ է նախատեսված 2016թ.-ին և 2017թ.-ին, իսկ 2018թ.-ին ընդամենը 660 000 ՀՀ դրամ։

4.2 2016 - 2018 թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից ՏԻՄ վճարած հարկեր և վճարները[26]

2016 - 2017թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից ՏԻՄ վճարած հարկերը և վճարներն ըստ ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների հետևյալն են.

Աղյուսակ 5

տեսակ	2016 թ., ՀՀ դր	ՀՀ դր 2017 թ., ՀՀ դր
Գույքահարկ (Թեղուտ, Շնող)	Հշվրկ. 4,170,818 Վճր. 5,951,500	4,066,836 4,065,067
Հողի հարկ (Թեղուտ, Շնող)	Հշվրկ. 3,844,976 Վճր. 3,844,968	3,853,282 3,853,282
Վարձակալություն	31,273,010	30,727,270

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի գրավոր հարցմանն ի պատասխան «Շնող» համայնքի ղեկավարը տեղեկացրել է, որ 2018թվականին «Թեղուտ» ՓԲԸ-ն Շնող համայնքի բյուջե կատարել է հետևյալ վճարումները.՝

գույքահարկ տրանսպորտային միջոցների համար- **3,660,710** ՀՀ դրամ,
գույքահարկ շինության համար- **3,164,645** ՀՀ դրամ,
հողի հարկ-**1,205,183** ՀՀ դրամ («Վալլեքս Հաուս»)
հողի հարկ-**17,360** ՀՀ դրամ («Արմենիան Քափր Փրոգրամ»)
վարձակալություն- **82,247,000** ՀՀ դրամ

[26] Տվյալներն ըստ www.eiti.am կայքի

4.3 «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ–ի կողմից 2016-18թթ. վճարված հարկերը և այլ վճարները համայնքի բյուջե ըստ ընդերքօգտագործողի կողմից ներկայացված հաշվետվության[27]

Աղյուսակ 6

Տեսակ/համայնք	2017 թ., ՀՀ դր	2016 թ., ՀՀ դր
Գույքահարկ (Երևան) Մղարթ, խոշ. հետո Օձուն Առինջ	7,357,652 17,060 258,244	-
Հողի հարկ (Երևան) Կողես-Բերդ Մղարթ, խոշ. հետո Օձուն Առինջ Տորֆավան Լուսակունք Նորակերտ	86,797 47,922 2,166 210,252 325,428 10,272 794,432	-
Վարձակալություն Օձուն	2,489,590	-

«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊ ընկերության կողմից 2016թվականին կատարված բոլոր տեսակի վճարների մասին տեղեկատվությունը բացակայում է www.eiti.am կայքում:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի հարցմանն ի պատասխան Օձուն համայնքի ղեկավարը տեղեկացրել է, որ «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Մղարթ բնակավայրում շահագործում է հանք: Մղարթ գյուղը համայնքի կազմի մեջ է ներառվել 2017թվականին և ընկերության կողմից համայնքի բյուջե վճարվում են հողի վարձակալության վճար, որը կազմում է տարեկան 2,489,588 ՀՀ դրամ և գույքահարկ տարեկան 17,000 ՀՀ դրամ: Սկսած 2017թվականից բացի այս վճարներից, ընկերությունը համայնքին այլ վճարներ չի վճարել, իսկ մինչև 2017թվականը ընկերության կողմից կատարած հարկային պարտավորությունների վերաբերյալ տվյալները բացակայում են Օձունի համայնքապետարանում:

[27] Տվյալներն ըստ www.eiti.am կայքի

2017 թվականին կատարված վճարների մասին տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 6-ում: Ինչպես երևում է աղյուսակից գույքահարկի և հողի հարկի դիմաց վճարումները կատարվել են ոչ միայն Մղարթ, խոշորացումից հետո Օձուն համայնքին, այլ նաև ուրիշ համայնքների: Այս առումով հաշվետվությունում առկա է ընկերության կողմից կատարված հետևյալ նշումը. «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊ ընկերությունն ունի բազմաթիվ հողատարածքներ ՀՀ տարբեր համայնքներում, այդ իսկ պատճառով տրամադրվող տեղեկատվությունը ներառում է հողի հարկի վերաբերյալ բոլոր հողատարածքների գծով՝ ըստ համայնքների:

5. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին 2016-18թթ. հատկացված մասհանումները և դրանց ներքո իրականացված ծրագրերի արդյունավետությունը

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բնապահպանական վճարներից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար:

Նույն օրենքի 1-ին հոդվածով նշված են այն ընկերությունների ցանկը, որոնց կողմից վճարվող բնապահպանական վճարներից մասհանումներ են կատարվում և առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն: Նույն հոդվածով սահմանվում է նաև համայնքների ցանկը և բնապահպանական վճարներից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով:

Մասհանումները տվյալ բյուջետային տարվա ընթացքում կատարվում են անմիջապես պետական բյուջեից՝ սուբվենցիայի տեսքով:

Ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի հիման վրա: Բնապահպանության և առողջապահության բնագավառներում լիազորված պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագրի նախագիծը համայնքի ղեկավարը ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը (վերոնշյալ օրենքի 3-րդ հոդված):

Ծրագիրը ներառում է՝

ա) համայնքի վարչական սահմաններում գտնվող հողային, ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական

հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումներ

բ) ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ

գ) ծրագրային միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները։

5.1 Ախթալա համայնքում իրականացված բնապահպանական սուբվենցիոն ծրագրերը և դրանց արդյունավետությունը.

Այսպիսով, այս օրենքի համաձայն Ախթալայի ԼՀԿ-ի արտանետումներից վնասակար ազդեցություն կրող Ախթալա խոշորացված համայնքը, որի մեջ են մտնում նաև Նեղոց, Շամլուղ, Մեծ Այրում, Ճոճկան, ք.Ախթալա բնակավայրերը «Ախթալայի ԼՀԿ» ՓԲ ընկերության կողմից վճարված բնապահպանական հարկերից և վճարներից ստանում են մասհանումներ։

2016թ. Ախթալա քաղաքը վերոնշյալ օրենքի համաձայն ստացել է 4,588,000 ՀՀ դրամ, որից 3,212,000 ՀՀ դրամը հատկացվել է բնապահպանական, իսկ 1,376,000 ՀՀ դրամը առողջապահական միջոցառումների համար։

Բնապահպանական միջոցառումների ներքո հատկացված գումարը ծախսվել է Ախթալա համայնքի Սարահարթ թաղամասի Աբովյան փողոցի ասֆալտապատման աշխատանքների համար, իսկ առողջապահական միջոցառումների ներքո մանկապարտեզներին սնունդ է հատկացվել։

2017թ-ին Ախթալա խոշորացված համայնքի մեջ մտնող բնակավայրերից Մեծ Այրում և Ճոճկան համայնքերն են ստացել գումարներ բնապահպանական սուբվենցիաների ներքո, համապատասխանաբար՝ 580,100 ՀՀ դրամ և 1,093,200 ՀՀ դրամ։

Գծապատկեր 6



Այս գումարներով իրականացվել են բնապահպանական միջոցառումների ներքո Մեծ Այրում բնակավայրում՝ համայնքի աղբահանության կազմակերպում, աղբի տեղափոխում Ալավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր (360000ՀՀ դրամ)և առողջապահական միջոցառումների ներքո՝ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրում՝ (220100 դրամ)։ Ճոճկան համայնքին հատկացված 1,093,200 ՀՀ դրամը ամբողջությամբ ծախսվել է առողջապահական միջոցառումների ներքո՝ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրման համար։

2018թ-ին համայնքը սուբվենցիա չի ստացել, քանի որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ ներքին պայմանավորվածության համաձայն, համայնքը գումարները կստանա 2021թ-ին՝ 2018, 2019, 2020 և 2021 թվականների գումարը միանգամից։

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի համաձայն՝ համայնքի կողմից ներկայացվող ծրագիրը պետք է ներառի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողային, ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումներ, ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ և ծրագրային միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները։

«Թափանցիկ և հաշվետու հանքարդյունաբերություն» ծրագրի ներքո թիրախային համայնքներում անցկացրած քննարկումների ժամանակ պարզեցինք, որ ընկերությունների գործունեությամբ պայմանավորված ազդեցություն կրող համայնքներին հատկացվող նպատակային՝ բնապահպանական սուբվենցիաները մեծ մասամբ ծախսվում են ոչ նպատակային։ Բացի այդ հանրությունը տեղեկացված չէ այդ գործընթացների մասին, կամ հետաքրքրություն չի դրսևորում, համայնքի ղեկավարը պատշաճ ձևով չի ներգրավում համայնքի բնակիչներին ծրագրի նախագծի քննարկման գործընթացներում, մինչդեռ օրենքը սահմանում է, որ Ընկերությունները, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական այլ անձինք Ծրագրի նախագծի վերաբերյալ կարող են համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր առաջարկություններ դրա հրապարակումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում(հոդված 3)։ Համայնքի բնակիչները չեն մասնակցում և առաջարկություններ չեն ներկայացնում, որովհետև վերջիններիս մոտ առկա է իրազեկության ցածր մակարդակ իրենց համայնքի բնապահպանական և առողջապահական խնդիրների վերաբերյալ։

Համաձայն օրենքի համայնքի ղեկավարը ծրագրերի նախագծերը համաձայնեցնում է Բնապահպանության և առողջապահության բնագավառներում լիազորված պետական կառավարման մարմինների հետ, համաձայնություն ստանալու դեպքում ներկայացնում է Համայնքի ավագանուն հաստատման։ Այս սխեմայով են հաստատվել սուբվենցիոն ծրագրերը։ Սակայն արդյո՞ք փողոցների ասֆալտապատումը, կամ աղբատար մեքենայի

ձեռքբերումը կարելի է համարել բնապահպանական միջոցառում և ինչու՞ է Շրջակա միջավայրի նախարարությունը տարիներ շարունակ համաձայնություն տվել նմանատիպ ծրագրերի: Նույն հարցը կարելի է ուղղել նաև առողջապահության նախարարությանը, արդյո՞ք նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրումը կարելի է համարել առողջապահական միջոցառում: Միգուցե տարբերակներ և պատասխաններ կան պատկան մարմինների կողմից, սակայն այն որ բուն խնդիրների վրա գումարները չեն ծախսվում և ոչ նպատակային են ծախսվում դա ակնհայտ է: Ակնհայտ է նաև, որ խախտվում է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը, քանի որ օրենքում հստակ նշվում է, որ ընկերությունների գործունեությամբ պայմանավորված խնդիրների լուծմանն են ուղղվելու գումարները, սակայն այդ խնդիրներն անտեսվում են, փոխարենը համայնքը այլ խնդիրների է ուղղում գումարները, որոնք այդ պահին առավել հրատապ է համարում, իսկ նախարարությունները չեն միջամտում, քանի որ վստահում են համայնքներին:

Այնուամենայնիվ մեր այցելությունների արդյունքում հանգեցինք այն եզրակացությանը, որ համայնքներում բնապահպանական և առողջապահական խնդիրները շատ խորն են և դրանց լուծումների համար մեծ ֆինանսներ են անհրաժեշտ, միգուցե դա է պատճառը, որ համայնքներն հատկացվող գումարները քիչ համարելով դրանք ուղղում են համայնքային այլ խնդիրների լուծման համար:

Քննարկումների ընթացքում հանրությանը հուզող մեկ այլ խնդիր բացահայտվեց: Խնդիրը նրանում է, որ համայնքների խոշորացումից հետո, խոշորացված համայնքի ոչ բոլոր բնակավայրերն են ազդակիր համարվում: Օրինակ՝ Ախթալա խոշորացված համայնքում ազդակիր են համարվում միայն Ախթալա, Շամլուղ քաղաքները: Նեղոց, Ճոճկան, Մեծ Այրում և Փոքր Այրում գյուղերը ազդակիր չեն համարվում: «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի գործունեության անմիջապես ազդեցության տակ են ընկնում նաև խոշորացված համայնքի մյուս բնակավայրերը և արդարացի կլիներ, որ այդ բնակավայրերը նույնպես ստանային սուբվենցիաներ: Միևնույն ժամանակ Շամլուղ բնակավայրի բնակիչներն էլ անհանգստացած են նրանով, որ առանց այդ էլ փոքր սուբվենցիոն գումարները կարող են ուղղվել ընկերության գործունեության անմիջական ազդեցության տակ չգտնվող, բայց ազդակիր խոշորացված համայնքի կազմում գտնվող մյուս բնակավայրերին ևս, նրանք առաջարկում են, որ օրենքով ամրագրվի ազդակիր լինելու կարգավիճակը, որ այն ունենա կոնկրետ ազդեցություն կրող բնակավայրը, ոչ թե ազդակիր համայնքը:

5.2 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն Ալավերդի, Աքորի, Հաղպատ ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները և համապատասխան բնապահպանական ու առողջապահական ծրագրերը

«Պատասխանատու և թափանցիկ հանքարդյունաբերություն» ծրագրի շրջանակներում «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի տարբեր պատկան մարմիններին ուղղված հարցումներից, Ալավերդու համայնքապետարանը միակն է, որ չի պատասխանել: Հարցումն առնչվում էր, թե արդյո՞ք համայնքում մետաղաձուլական կամ

հանքարդյունաբերական գործունեություն ծավալող ընկերությունների կողմից սոցիալական-կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում համայնքին տրամադրվել են ֆինանսական կամ ոչ ֆինանսական միջոցներ, ի՞նչ բնապահպանական սուբվենցիաներ են տրամադրվել պետական բյուջեից 2016-18թթ.-երին և ի՞նչ ծրագրեր են իրականացվել, ինչպես նաև նույն ընկերությունների կողմից համայնքային բյուջե վճարված հարկերի չափի, մասնավորապես՝ արդյունաբերական գործունեության տարածքների, պոչամբարների, թափոնավայրերի հողի համար վճարված, կամ վարձակալած հողի հարկի, փոխադրամիջոցների և անշարժ օբյեկտների գույքահարկերի մասին:

Այնուամենայնիվ մենք փորձեցինք տվյալներ ձեռք բերել այլ աղբյուրներից: Մեզ հաջողվեց պարզել, որ 2016թ. Ալավերդի համայնքը բնապահպանական սուբվենցիաներ չի ստացել, իսկ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն Ալավերդի, Աքորի, Հաղպատ ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները և համապատասխան բնապահպանական ու առողջապահական ծրագրերը ներկայացված են հավելվածում 1-ում:

Գծապատկեր 5-ում և 6-ում ներկայացված է համապատասխանաբար 2017–2018թթ. ընթացքում Ալավերդի համայնքում բնապահպանական սուբվենցիաների ներքո իրականացված ծրագրերը[28] :



Գծապատկեր 5

[28] Գրաֆիկներն ըստ «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի վերլուծության



Գծապատկեր 6

Ծրագրի շրջանակներում Ալավերդի համայնքում իրականացված ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում պարզեցինք, որ, ինչպես մյուս համայնքներում այստեղ ևս բնապահպանական սուբվենցիաների ներքո իրականացված ծրագրերն անարդյունավետ են։

Թեև տարիներ շարունակ գործարանը վնասներ է պատճառել շրջակա միջավայրին, բայց երբևիցե չի իրականացվել շրջակա միջավայրի բաղադրիչներին պատճառված վնասների վերականգնման ծրագրեր։

Մեր հանդիպումների ժամանակ պարզեցինք նաև, որ այս ծրագրերն իրականացնելիս քաղաքապետարանը գումարներ է տնտեսել, որի արդյունքում իրականացված ծրագրերը թերի են եղել։ Բնակիչները հատկապես բողոքում էին նոր կառուցված շուկայից, որն ըստ նրանց կարծիքի անտեղի ծախս է։ Ալավերդի քաղաքում Սայաթ-Նովա փողոցի նախկին զբոսայգու հարակից տարածքում շուկայի կառուցման համար նախատեսված է եղել 7 մլն 83հազ. 200 դրամ՝ առողջապահական ծրագրերի ներքո, սակայն ծախսվել է 6 մլն դրամ։ Թե շուկայի կառուցումը ինչպես է դիտարկվել որպես առողջապահական ծրագիր, կարելի է ենթադրել, որ որպես հիմնավորում մթերքն արտաքին ազդեցությունից պաշտպանելն է հաշվի առնվել։ Կառուցվել է թիթեղյա շինություն, որն այժմ չի օգտագործվում քաղաքի բնակիչների կողմից։ Պատճառներն այն են, որ շուկան կառուցվել է ոչ նպատակահարմար վայրում, այն շատ մոտ է գնացքի գծերին, հետո թիթեղյա շինության ներսում շատ շոգ է լինում, մթերքն արագ փչանում է։

Արևային ֆոտովոլտային կայանի ձեռքբերում և տեղադրում 12 մլն 585 հազար 900 դրամը ևս ոչ նպատակահարմար են գտնում բնակիչները, քանի որ համայնքը համապատասխան մասնագետ չունի։

Հանդիպումների ընթացքում պարզեցինք նաև, չնայած բնապահպանական և առողջապահական ակնհայտ վատ իրավիճակին, բնակչությունը տեղեկացված չէ Ալավերդու շրջակա միջավայրին և իրենց առողջությանը պղնձաձուլական գործարանի պատճառած վնասների մասին: Հետևաբար նրանք չեն մասնակցում և առաջարկություններ չեն ներկայացնում այդ ծրագրերի կազմման և քննարկման գործընթացներին:

5.3 «Թեղուտ» ՓԲԸ-ի կատարած բնապահպանական վճարներից մասհանումները ազդակիր համայնքներին

Ինչպես արդեն նշվել է «Թեղուտ» ՓԲԸ-ն շահագործում է Թեղուտի պղինձմոլիբդենային հանքավայրը, որը գտնվում է Շնող խոշորացված համայնքի վարչական տարածքում:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի գրավոր հարցմանը՝ Բնապահպանական սուբվենցիաների մասով Շնող խոշորացված համայնքի ղեկավարը տեղեկացրել է, որ 2016,2017,2018թթ. հատկացումներ չեն եղել:

Շնող համայնքում տեղի ունեցած քննարկումների ժամանակ պարզել ենք, որ բնակիչները դժգոհում են այն հանգամանքից, որ իրենց համայնքը չի ստանում բնապահպանական սուբվենցիաներ, մինչդեռ իրենք կրում են հանքավայրի վնասները: Շնող խոշորացված համայնքի Շնող և Թեղուտ բնակավայրերը գտնվում են հանքավայրի անմիջական ազդեցության տակ, սակայն «Թեղուտ» ՓԲԸ-ն ներառված չէ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում ներառված աղտոտող ձեռնարկությունների ցանկում, ինչի հետևանքով Շնող խոշորացված համայնքը, որպես ազդակիր համայնք, չի ստանում բնապահպանական սուբվենցիա:

5.4 Օձուն խոշորացված համայնքին հատկացված բնապահպանական սուբվենցիաները և դրանց ներքո իրականացված ծրագրերը.

Օձուն համայնքի Օձուն բնակավայրը ազդեցություն է կրում Ալավերդու պղնձաձուլական գործարանի աշխատանքի արդյունքում և համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի ստանում է բնապահպանական սուբվենցիաներ:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի գրավոր հարցմանն ի պատասխան Շնող խոշորացված համայնքի ղեկավարը պատասխանել է, որ 2016-2018թթ. պետական բյուջեից սուբվենցիաների տեսքով համայքնին հատկացվել է 67,724,400 ՀՀ դրամ, իրականացված ծրագրերն են՝

- բնապահպանական ծրագրեր՝ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ
- առողջապահական ծրագրեր՝ նախակրթարանների սաներին սննդով ապահովում:

6. Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ ԿՍՊ բիզնես մոդելի մեջ ինտեգրված կորպորատիվ ինքնակարգավորման ձև է, որի միջոցով տնտեսվարող սուբյեկտը ապահովում և հսկում է իր գործունեության համապատասխանությունը օրենքի պահանջներին, բարոյական ստանդարտներին և միջազգային նորմերին: Այն հայտնի է նաև որպես կորպորատիվ խիղճ, կորպորատիվ քաղաքացիություն կամ կայուն պատասխանատու բիզնես: ԿՍՊ-ով առաջնորդվող ընկերությունը պատասխանատվություն է կրում շրջակա միջավայրի, սպառողների, աշխատողների համայնքների և այլ շահագրգիռ կողմերի վրա ունեցած իր ազդեցությունների համար: Այն կամավոր կերպով, անկախ օրենքի պահանջներից, հաշվի է առնում հասարակության շահերը, աշխատում է խուսափել իր գործունեության բացասական ազդեցություններից, նպաստումէ ազդակիր համայնքների աճին և զարգացմանը:

6.1«Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից Համայնքին կատարած անհատույց օտարումները 2016-2017թթ[29].

Աղյուսակ 5

Համայնք/նպատակ	2016 թ., ՀՀ դր	**2017 թ., ՀՀ դր**
Ընդհանուրը՝	2 865 562	1 247 210
Ախթալա համայնք, գ. Ճոճկան, Ճոճկան գյուղի ջրագծի վերանորոգում	2 205 607 Ոչ ֆինանսական	
Ախթալա համայնք, ք. Շամլուղ Ախթալա-Շամլուղ միջհամայնքային ճանապարհի մաքրման աշխատանքներ (ձյունից)	659 955 Ոչ ֆինանսական	747 210 Ոչ ֆինանսական
Ախթալա համայնք, գ. Այրում Ֆինանսական աջակցություն	–	500 000 ֆինանսական

[29] Տվյալներն ըստ www.eiti.am կայքի

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ից 2016-17թթ.-երին ընկերությունը ոչ ֆինասական աջակցություն է ցուցաբերել գ. Ճոճկանին գյուղի ջրագծի վերանորոգման համար և ք. Շամլուղին Ախթալա-Շամլուղ միջհամայնքային ճանապարհի ձնամաքրման աշխատանքների համար, իսկ Այրում գյուղին 2017թ.-ին ցուցաբերել է 500 000 ՀՀ դրամի ֆինանսական աջակցություն:

Ընկերությունը 2016թ.-ին ֆինանսական աջակցություն է ցուցաբերել «ԷԽՈ» հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը ՝ 100,000 ՀՀ դրամ և Հայաստան Համահայկական Հիմնադրամին 1,000,000 ՀՀ դրամ:

2017թ.-ին ֆինանսական աջակցություն է ցուցաբերել «ԷԽՈ» հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը ՝ 97,000 ՀՀ դրամ Վիկտորիա մարդասիրական կազմակերպությանը 200, 000 ՀՀ դրամ, Բոհեմ կամերային թատրոնին 70,000 ՀՀ դրամ և 4 ֆիզիկական անձի ընդհանուր թվով 1,250,000 ՀՀ դրամ:

Ինչպես արդեն նշեցինք 12.04.2018թվականին «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի և Ախթալա համայնքապետարանի միջև կնքված պայմանագրի հիման վրա, «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ն համայնքապետարանին վճարում է ամսական 5 մլն դրամ՝ Ախթալա համայնքի բարեկարգման և սոցիալական ծրագրեր իրականացման համար: Ըստ համայնքապետարանի ներկայացրած տեղեկատվության 2018թվականին այդ գումարը կազմել է 40,000,000 ՀՀ դրամ: Այդ գումարից 16 613 547 ՀՀ դրամը հատկացվել է Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի և Ճոճկան գյուղի զբոսայգիների վերանորոգման աշխատանքների ծախսերի համար, 6 623 770 ՀՀ դրամը Ախթալա քաղաքի շենքերի հարկից աստիճանների նորոգման աշխատանքների 2 160 000 ՀՀ դրամը Ախթալա համայնքի վարչական տարածքում թվով 7 կանգառների կառուցման աշխատանքների համար, որոնց գումարը կազմել է 25,397,317 ՀՀ դրամ: Իսկ 14,602,683 ՀՀ դրամ մնացորդը կտեղափոխվի 2019 թվականի բյուջե, որը 2019 թվականի հուլիսի 29-ի դրությամբ կազմում է 35,000,000 ՀՀ դրամ և մինչև տարեվերջ ստացվելիք 25,000,000 ՀՀ դրամը՝ ընդամենը 74,602,683 ՀՀ դրամ կօգտագործվի ՀՀ համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հետևյալ սուբվենցիոն ծրագրերի համար.

- Ախթալա համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում,
- Ախթալա համայնքի Ճոճկան բնակավայրի ոռոգման գլխավոր առվի վերանորոգում,
- Ախթալա համայնքի «Ախթալա քաղաքի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի վերանորոգում,
- Ախթալա համայնքի Մեծ Այրում բնակավայրի ջրամատակարարում,
- Ախթալա համայքի փողոցների մասնակի վերանորոգում և ասֆալտապատում,
- Ախթալա համայքի Ճոճկան բնակավայրի մշակույթի տան վերանորոգում,
- Ախթալա համայնքի գազաֆիկացում,
- Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի և Ճոճկան բնակավայրի փողոցային լուսավորություն

«Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից հատկացված ամսական վճարները պայմանագրով նախատեսված են սոցիալական ծրագրերի իրականացման համար, սակայն դա չի նշանակում, որ պետք է անտեսվեն բնապահպանական և առողջապահական ծրագրերը: Չէ, որ այս բոլոր խնդիրները փոխկապակցված են և միայն զուգահեռաբար իրականացվող ծրագրերը կարող են բերել համայնքների վիճակի բարելավմանը:

Ս.թ. հուլիսի 29-ին Ախթալա, Օձուն և Շնող համայնքերում «Թափանցիկ եւ հաշվետու հանքարդյունաբերություն» ծրագրի շրջանակներում ստեղծված ՇՊ խմբի անդամները հարցազրույցներ վարեցին համայնքների ղեկավարների հետ: Հարցազրույցի ընթացքում տեղերում ծանոթացանք նախորդ երեք տարիներին համայնքում իրականացված բնապահպանական ու մետաղական հանքարդյունաբերական ընկերությունների կողմից կամավոր և պարտադիր (պայմանագրով սահմանված դեպքերում) իրականացվող սոցիալական ծրագրերի էությանը, հանրային մասնակցության ապահովմանը և ներգրավվածությանը վերաբերող հարցերին: Հարցազրույցից հետո համայնքի ղեկավարների հետ քննարկվեցին ԱՃԹՆ զեկույցի ընտրված թեմաների եւ ԲՇԽ անդամների ընտրությունների հետ կապված հարցեր, քննարկվեցին համայնքի առաջնահերթ խնդիրների ու համայնքի զարգացման այլընտրանքային ուղիների մասին: Հանդիպման արդյունքում պարզ դարձավ, որ թեև համայնքների ղեկավարները տեղյակ են ԱՃԹՆ զեկույցի մասին, մասնակցել են սեմինարների և քննարկումների, սակայն ներգրավվածություն եւ մասնակցություն չունեն ԱՃԹՆ գործընթացներին: Նրանք նշեցին, որ հույս ունեն, համագործակցության արդյունքում և առաջարկություններով հանդես գալու դեպքում կնպաստեն ոլորտն իսկապես թափանցիկ եւ մատչելի դարձնելուն:

6.2 2016 - 2018 թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից կատարված անհատույց օտարումները[30].

Աղյուսակ 7

տեսակ	2016 թ., ՀՀ դր	ՀՀ դր 2017 թ., ՀՀ դր
Ֆինան. օգն. Թեղուտ, Շնող	3,000,000	3,000,000
Ոչ ֆինանսական օգն.	6,214,464	255,228
Աշխատատեղեր	1 222 մարդ	1 199 մարդ
Անհատույց օտարումներ. Նվիրատվություն և այլն	30,000	17,493,500

[30] Տվյալներն ըստ www.eiti.am կայքի

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի գրավոր հարցմանը այն մասին, թե արդյո՞ք հանքարդյունաբերական ընկերությունների կողմից սոցիալական-կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում համայնքին տրամադրվել են ֆինանսական կամ ոչ ֆինանսական միջոցներ, Շնող համայնքի ղեկավարը պատասխանել է, որ 2016-2017թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ն «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին տրամադրել 19,000,000 ՀՀ դրամ Շնողի մանկապարտեզի վերանորգման համար, որն ամբողջությամբ ծառայել է նպատակին:

2017 թ. «Թեղուտ» ՓԲԸ-ն, Շնող համայնքի բյուջեին է փոխանցել 41,700,000 ՀՀ դրամ, որը ծախսվել է Շնող համայքնի 3-րդ փողոցի 620մ ճանապարհահատվածի վերանորոգման, կոյուղագծի կառուցման և ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

«Աջակցություն Շնողին» ՀԿ-ին 19,000,000 ՀՀ դրամ փոխանցելու հանգամանքի կապակցությամբ համայնքում տեղի ունեցած քննարկումների ժամանակ մեզ պարզ դարձավ, որ այստեղ անհարթություններ կան: Մեզ հետաքրքրում էր այն հանգամանքը, թե ինչու՞ է գումարը փոխանցվել հասարակական կազմակերպության հաշվին, այլ ոչ համայնքի բյուջե: Այս հարցը մեկնաբանվեց հեևյալ կերպ, որ «Աջակցություն Շնողին» ՀԿ-ի տնօրենն է դիմել «Վալեքս» խմբին մանկապարտեզի վերանորոգման խնդրանքով: ՀԿ-ի խնդրանքին ընդառաջելով 2016թ.-ին կազմակերպությունը ՀԿ-ի հաշվին փոխանցել է 5,000,000 ՀՀ դրամ:

2017 թ. մարտի 17-ին Շնողի մանկապարտեզի վերանորոգմանն աջակցելու նպատակով «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին 3 մլն. դրամ փոխանցել է նաև «Տաշիր» հիմնադրամը Շնողի գյուղապետի դիմումի համաձայն:

Թեև համայնքապետարանը հավաստիացրել է, որ 19,000,000 ՀՀ դրամը ծառայել է ամբողջովին իր նպատակին, սակայն կասկած է հարցում այն հանգամանքը, թե ինչու գումարները անմիջապես համայնքի բյուջե չեն մուտքագրվել:

Ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվությունների համաձայն «Թեղուտ» ՓԲԸ-ն 2017թ.-ին «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին տրամադրել է 14,486,000 ՀՀ դրամ: Իսկ 2016թ.-ի հաշվետվությունում չկա նշված վճարված գումար, այստեղից հակասություն է առաջանում ինչու 2016թ.-ին «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին վճարված 5,000,000 ՀՀ դրամը չի երևում ընկերության հաշվետվությունում:

2017թ. «Թեղուտ» ՓԲԸ-ն, Շնող համայնքի բյուջեին է փոխանցել **41,700,000** ՀՀ դրամ, որը ծախսվել է Շնող համայքնի 3-րդ փողոցի 620մ ճանապարհահատվածի վերանորոգման, կոյուղագծի կառուցման և ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ իրականացնելու համար: ***Այս գումարի մասին ևս ընկերության հաշվետվությունում չի նշված:***

Այստեղ եզրակացնում ենք, որ առկա է «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության ոչ թափանցիկ գործելաոճ:

Ինչպես տեսնում ենք ընկերությունն իր հաշվետվություններում նշել է սոցիալ-տնտեսական ներդրումների ներքո հատկացված գումարների մասին, սակայն Տարածքային կառավարման և զարգացման նախարարարության հաշվետվություններում 2016 և 2017թթ. Թեղուտի մասով Սոցիալ-տնտեսական ներդրումներ բաժնում նշումներ չկան: Այստեղ ևս կարող ենք եզրակացնել, որ հաշվետվություններում անհամապատասխանություն կա:

6.3 «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՓԲԸ-ի կողմից կողմից կատարված անհատույց օտարումները

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի հարցմանն ի պատասխան Օձուն համայնքի ղեկավարը տեղեկացրել է, որ «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից սոցիալական-կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում համայնքին չեն տրամադրվել ֆինանսական կամ ոչ ֆինանսական միջոցներ: Ընդերքօգտագործողների կողմից տրամադրված 2017թվականի հաշվետվությունում (2016թվականի հաշվետվությունը ներկայացված չէ) Սոցիալ-տնտեսական ներդրումներ բաժնում կատարված է հետևյալ նշումը՝ Սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ և բարեգործական հատկացումներ սահմանված չէ, ընդհանրապես ներկայացված չի եղել (ի թիվս այլոց մինչ 2012թ. ընդերքի օգտագործման թույլտվություն ստացած լինելու պատճառով): Սա նշանակում է, որ ընկերությունը պատճառաբանում է, որ քանի որ չունի պայմանագրային պարտավորություններ, այդ պատճառով չի իրականացրել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող ծրագրեր: Մինչդեռ ընդերքօգտագործողի կողմից այդ պարտավորությունների ստանձնումը պարտադիր է՝ համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 54-ի 3-րդ մասի 9-րդ կետի, որը կարգավորում է ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընդերքօգտագործողի ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները:

Հարկ է նշել, որ չնայած նրան, որ մյուս ընկերությունների պայմանագրերում ևս սահմանված չեն ընկերության սոցիալ-տնտեսական պարտավորությունները, սակայն նրանք հատկացրել են գումարներ համայնքներին: Սույն զեկույցի 6-րդ բաժնում ներկայացված է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին, որը մեկնաբանվում է նաև որպես կորպորատիվ խիղճ, կորպորատիվ քաղաքացիություն կամ կայուն պատասխանատու բիզնես: ԿՍՊ-ով առաջնորդվող ընկերությունը պատասխանատվություն է կրում շրջակա միջավայրի, սպառողների, աշխատողնեի համայնքների և այլ շահագրգիռ կողմերի վրա ունեցած իր ազդեցությունների համար: Այն կամավոր կերպով, անկախ օրենքի պահանջներից, հաշվի է առնում հասարակության շահերը, աշխատում է խուսափել իր գործունեության բացասական ազդեցություններից, նպաստումէ ազդակիր համայնքների աճին և զարգացմանը: Սակայն ինչպես տեսնում ենք «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊ ընկերությունը առաջնորդվում է միայն օրենքի պահանջներով: Հետևաբար պայմանագրերի վերանայման անհրաժեշտության ևս մեկ պատճառ է ավելանում:

7. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրեր.

Ծրագրում ընդգրկված թիրախ համայնքներում հանքարդյունաբերական գործունեություն են ծավալում են ծավա ընդերքօգտագործման պայմանագրեր ունեն «Ախթալայի ԼՀԿ» ՓԲ, «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊ ընկերությունները, որոնք կնքել են պայմանագրեր ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ համապատասխանաբար՝ Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ոսկու հանքավայրերի շահագործման նպատակով:

Աղյուսակ 8-ում ներկայացված է տեղեկատվություն այդ 3 կազմակերպությունների ընդերքօգտագործման իրավունքների մասին

Աղյուսակ 8

Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրի հասցեն	Թույլտվության համարը, տրման ա.ա.տ.	Գործողության ժամկետի ավարտը	Պայմանագրի համարը, տրման ա.ա.տ.	Լեռնահատկացման ակտի համարը, տրման ա.ա.տ.
«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Շամլուղի պղինձ	ՇԱԹՎ-29/103 20.10.12թ	04.11.2029թ.	ՊՎ-103 20.10.12թ	ԼՎ-103 20.10.12թ
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Թեղուտի պղինձ-մոլիբդեն	ՇԱԹՎ -29/376 20.02.13թ	08.02.2026թ.	ՊՎ-376 20.02.13թ	ԼՎ-376ա 04.04.13թ
«Մուլտի Գրուպ կոնցեռն»ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, Մղարթի ոսկի /թիվ 8 և 5 հանքային մարմիններ/	ՇԱԹՎ-29/213 20.10.12թ	06.03.2031թ.	ՊՎ-213 20.10.12թ	ԼՎ-213 20.10.12թ

7.1 Պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարներ

Համաձայն ընդերքօգտագործման պայմանագրերի, ընդերքօգտագործման դիմաց ընդեքօգտագործողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպանական, բնօգտագործման կամ ռոյալթի)՝ «Բնապահպանական և բօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով, ինչպես նաև վճարվում է պետական տուրք՝ համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով։

Ընդեքօգտագործման պայմանագրերի համաձայն ընդերքօգտագործողը պարտավոր է վճարել նաև բնության և շրջակա միջավայրի դրամագլխին և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման մշտադիտարկումների վճարներ։ Պայմանագրերով ամրապնդվում է, որ ընդերքօգտագործողը պետք է կատարի նախնական և ընթացիկ հատկացումներ բնության և շրջակա միջավայրի դրամագլխին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով։

7.2 Ընդերքօգտագործման պայմանագրերի ուսումնասիրություն

Ուսումնասիրելով 3 ընկերությունների, ընդերքօգտագործման պայմանագրերը, բացահայտվել են հետևյալ հանգամանքները.

ա/ Նշված պայմանագրերը կնքված են 2012 և 2013 թվականներին, սակայն պայմանագրերի 2-րդ կետում՝ Պայմանագրի առարկան խոսվում է ավելի վաղ տարեթվերի մասին, օրինակ՝ Ախթալայի ԼՀԿ-ի պայմանագրում նշված է, որ լիազոր մարմինը օգտագործողին տարեկան 100 հազար տոննա օգտակար հանածոյի պաշարների մարման համար ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում 2007թ. սեպտեմբերի 7-ից 15 տարի ժամկետով, իսկ ընդերքօգտագործողն ընդունում է Շամլուղի պղնձի հանքավայրի հաշվեկշռային պաշարներն օգտագործման ամբողջ ժամկետի համար 1500.0 հազ.տ ։ Այսինքն՝ պայմանագրից անհասկանալի է, թե ինչու է 2012թ.-ին կնքված պայմանագրում խոսվում 2007թ.-ի մասին։ Նույն հանգամանքն առկա է նաև մյուս երկու ընկերությունների հետ կնքված պայմանագրերում։ Ենթադրվում է, որ այս պայմանագրերը նախկինում կնքված պայմանագրերի հիման վրա են կնքված, 2011թ. Ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքի պահանջներից ելնելով, սակայն լիազոր մարմնի կայք էջում առկա են միայն 2012 և 2013 թվականներին կնքված պայմանագրերը և ոչ մի հոդում չի կատարվում նախկին պայմանագրերին։

Այսինքն՝ կնքվել են նոր պայմանագրեր, տրվել են նոր թույլտվություններ և լեռնահատկացման ակտեր, որոնց պարագայում այս հանքավայրերի արդյունահանման

ծրագրերը պետք է անցնեին Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր փորձաքննություն, ինչը չի արվել։

բ/ Ընդերքօգտագործողի պարտավորությունների մեջ է մտնում՝ ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը և ապահովել փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը։ Միջոցառումների մասին նշվում է, սակայն չի ներկայացվում միջոցառումների ծրագիրը, կամ հղում չի տրվում որևէ փաստաթղթի։

գ/ Պայմանագրերի ուսումնասիրությունից պարզում ենք, որ ընդերքօգտագործողները չունեն ազդակիր համայնքների նկատմամբ սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պայմանագրային պարտավորություններ։ Մինչդեռ այդ պարտավորությունների ստանձնումը պարտադիր է՝ համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 54-ի 3-րդ մասի 9-րդ կետի, որը կարգավորում է ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընդերքօգտագործողի ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները։

դ/Պայմանագրերի ամբաժանելի մաս համարվող հավելվածում նշվում է բնության և շրջակա միջավայրի դրամագլխին և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման մշտադիտարկումների վճարների մասին։ Թեղուտի և Մղարթի հանքավայրերի պայմանագրերում նշված է դրամագլխի նախնական և ընթացիկ վճարների չափաքանակների մասին, սակայն Ախթալայի ԼՀԿ-ի պայմանագրում չի նշված դրամագլխի գումարի չափը, միայն մեկ կետով նշված է դրամագլխի և մշտադիտարկումների վճարների մասին։

Ընկերությունը կատարել է դրամագլխի և մշտադիտարկումների վճարները 2018թ.-ին (տես՝ 3.2.3 կետը), սակայն այն պետք է ամրագրվի նաև պայմանագրով։

ե/ Բոլոր 3 պայմանագրերն ունեն փոփոխություններ, որոնք կցված են պայմանագրերին։

2015թ.-ին ընդերքօգտագործման պայմանագրերում փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք վերաբերել են կոորդինատային համակարգի փոխարինմանը՝ նախկին խորհրդային տարիների կոորդինատային համակարգը փոխարինվել է համաշխարհային գեոդեզիական կոորդինատային ժամանակակից (WGS-84) համակարգի։

Ախթալայի ԼՀԿ-ի պայմանագրում ի թիվս վերոնշյալ փոփոխության, առկա են նաև հետևյալ փոփոխությունները՝

-2013 թվականին շահագործվող պաշարների առանձնացում է տեղի ունեցել, առանձնացվել է բացահանքից և ստորգետնյա հանքից շահագործվող օգտակար հանածոյի չափաքանակները, այսինքն՝ նախնական պայմանագրի 2.1 կետի համաձայն ընդհանուր նշված՝ տարեկան 100 հազար տոննա օգտակար հանածոյի պաշարների մարման փոխարեն գրվել է՝ տարեկան 75

հազար տոննա բացահանքից, 25 հազար տոննա ստորգետնյա հանքից և ընդհանուր շահագործման՝ 1500.0 հազար տոննա պաշարների մեջ մտնող 396694.8 տոննան նշվել է, որ պետք է շահագործվի 1090մ հորիզոնից վերև։

- 2019թ.-ի մարտի 15-ին կնքված Համաձայնագիրը, նույնպես վերաբերվում է նախնական պայմանագրի 2.1 կետին և չնայած նրան, որ արդեն 2013թ.-ի փոփոխության համաձայն 100 հազար տ/տարին պետք է կարդացվեր (75 հազ.տ/տարի բացահանքից և 25 հազ. տ/տարի ստորգետնյա հանքից), կրկին հղում է կատարվում նախնական 100 հազ. տ/տարիի վրա և նշվում է, որ այդ թիվը պետք է լինի 336 հազ. տ/տարի։ Այսինքն, պայմանագրից անհասկանալի է, թե այդ քանակի հանքանյութը բացահանքով է շահագործվելու, թե ստորգետնյա։ Ուսումնասիրելով Շամլուղի ստորգետնյա հանքի վերազինման նախագիծը և այդ նախագծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությունը (տրված՝ 2018թ. սեպտեմբերի 17-ին), պարզում ենք, որ բացահանքի պաշարները գործնականորեն սպառվել են և ներկայացվում է մինչև 500 հազ. տ/տարի արտադրողականության ստորգետնյա շահագործման նախագիծ, որը և ստանում է դրական փորձաքննական եզրակացություն։ Այսպիսով, եթե հաշվի առնենք, որ 2013թ. փոփոխությամբ 25 հազ. տ/տարի հանքանյութ էր շահագործվելու (ստորգետնյա), այդ թիվը հասցվում է 336 հազ. տ/տարի, այլ կերպ ասած մոտ 13 անգամ ավելացվել է հանքաքարի շահագործումը։

2019թ. կնքված նույն Համաձայնագրում (պայմանագրում) հղում է կատարվում նախնական պայմանագրի հավելվածին, որտեղ նշված են ընդերքօգտագործողի ֆինանսական առաջարկները և նրա կողմից վճարվող ընդերքօգտագործման վճարները։ Ինչպես նշեցինք այս փոփոխությամբ 13 անգամ ավելացվում է արդյունահանվող հանքաքարի քանակությունը, իսկ պարզվում է ընդերքօգտագործողի ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները չի փոփոխվել։

զ/ Պայմանագրերում նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է՝ ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությամբ նախատեսված պայմանները։

Ուսումնասիրելով, օրինակ «Շամլուղի ստորգետնյա հանքի վերազինում մինչև 500.0 հազ.տ/տարի արտադրողականությամբ» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը, այնտեղ փորձաքննության պահանջների մեջ նշված է, որ «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացիան պետք է ավարտին հասցվի 01.03.2020թ.։ Սակայն մեր ունեցած տեղեկություններով, այն այժմ նույնիսկ չի սկսվել։ Հետևաբար, կարող ենք փաստել, որ պայմանագրի կետերի խախտում է իրականացվում ընդերքօգտագործողի կողմից։

ե/ Համաձայն ընդերքօգտագործման պայմանագրերի ընդերքօգտագործողը պարտավոր է՝ ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի ու բնության և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար

ազդեցություններից: Սակայն զեկույցում նշված բազմաթիվ փաստերն ապացուցում են, որ ընդերքօգտագործողը չի ապահովվում նաև այս պարտավորությունը:

զ/ Ընդերքօգտագործման պայմանագրերի համաձայն ընդերքօգտագործողը պարտավոր է նաև վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի:

Ելնելով վերոնշյալից հարկ է նշել, որ այս ընկերությունների ընդերքօգտագործման պայմանագրերը թերի են և ենթակա են վերանայման: Իսկ պայմանագրերի կետերի խախտումների առնչությամբ հարկ է հատուկ ուշադրություն հրավիրել պատկան մարմիններին:

8. Մասնակցային հետազոտության արդյունքներ

Ծրագրի թիրախային՝ Ախթալա, Ալավերդի, Շնող և Օձուն համայնքներում կատարվել է մասնակցային հետազոտություն, նախօրոք մշակված հարցաթերթերի հիման վրա:

Հարցումներին յուրաքանչյուր համայնքից մասնակցել է 100 մարդ:

Ստորև ներկայացնում ենք հարցումների արդյունքները ամփոփված տեսքով.

Շնող համայքնում՝ տեղյակ եք արդյո՞ք համայնքում 2016,17,18 թվականներին ի՞նչ բնապահպանական ծրագրեր են իրականացվել հարցին, հարցվածների 0,9%-ը պատասխանել են, որ տեղյակ են և նշել են միայն համայնքում իրականացված ծառատունկերի մասին, իսկ 99,1%-ը պատասխանել է, որ տեղյակ չեն:

Նշումներ կան այն մասին, որ հանքարդյունահանող ընկերությունն բացի ծառատունկից ոչինչ չի եղել, այն էլ անարդյունավետ:

Հարցվածների 100%-ը պատասխանել են, որ երբևիցե չեն մասնակցել, հետևաբար նաև առաջարկություններ չեն ներկայացրել համայնքի բնապահապանական ծրագրերին առնչվող քննարկումներին:

Որպես համայնքի բնապահպանական հիմնախնդիր հարցվածները առաջնահերթ նշել են օդի աղտոտվածության խնդիրը (80%), ինչպես նաև նշվել է մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտվածության, հողերի դեգրադացիայի, անօրինական անտառահատումների, գյուղատնտեսական արտադրանքի ցածր բերքատվության և այլ խնդիրների մասին:

Ախթալա համայնքում հարցվածների մեծ մասը՝ 75% տեղյակ չէ համայնքապետարանի և հանքարդյունահանող ընկերությունների կողմից իրականացված ծրագրերից:

Բոլոր հարցվածները տեղյակ են պոչամբարների մասին:

Հարցվածները նշել են, որ հանքարդյունահանող ընկերությունների կողմից հաշվետվություններ չեն լինում և իրենք չգիտեն, թե ինչ սոցիալական պատասխանատվության ծրագրեր են իրականացվում ընկերությունների կողմից և ԿՍՊ-ի շրջանակներում ինչ գումարներ են հատկացվում համայնքներին։

ԱՃԹՆ-ի մասին լսել են Շահերի պաշտպանության խմբի անդամներից։ Օձուն համայնքում հարցվածները նշել են համայնքում իրականացված ծրագրերից՝ ծառատունկ, փողոցային լուսավորություն, ասֆալտապատում։ Նշել են նաև, որ չեն մասնակցել քննարկումների գործընթացներին և առաջարկություններ չեն ներկայացրել, բացառությամբ հարցվածների 0,6%-ի, որոնք նշել են, որ մասնակցել են քննարկումների։ Բնապահպանական խնդիրներից նշել են՝ կոյուղագծերի բացակայությունը և անտառահատումների խնդիրները։

Ալավերդի համայնքում ընդհանուր պատկերը, փոքր ինչ տարբերվում է մնացած համայնքներից, հարցվածները տեղեկացված են կատարված ծրագրերի մասին, սակայն չեն մասնակցել և առաջարկներ չեն ներկայացրել քննարկումների գործընթացին։ Հարցվածներից 0,1%-ն է ներկայացրել առաջարկություն։ Բնապահպանական խնդիրներից նշել են՝ օդի աղտոտվածությունը, աղբի կառավարում, կանաչապատում, ոռոգման ջրի սակավություն և որակ, ճանապարհների անմխիթար վիճակ։

Վերոնշյալ խոշորացված համայնքներում և դրանց առանձին բնակավայրերում սուն ծրագրի շրջանակներում իրականացված ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ մասնակիցների կողմից կատարվել են իրենց համայնքի խնդիրների լուծմանը նպաստող հետևյալ առաջարկությունները .

Ախթալա՝

-Կանաչ գոտիների բարեկարգում և ընդլայնում,

-Այլընտրանքային էներգիայի աղբյուրների ստեղծում,

-Միջհամայնքային տրանսպորտային ցանցի ստեղծում և բարելավում,

-Կեղտաջրերի մաքրման կայանների ստեղծում,

-Կրծողների դեմ պայքարի միջոցառումների իրականացում,

-Թափառող շների և թափառող կենդանիների հարցի կարգավորում,

-Ճանապարհների փոշու մաքրում ջրով,

-Աղբի կառավարում, աղբավայրերի ստեղծում,

-Պոչամբարների անվտանգության խնդիրների լուծում, հնարավորության դեպքում ռեկուլտիվացիա,

-Համայնքներում բժիշկ-մասնագետների ապահովում, բժշկական լաբորատորիաների ստեղծում,

-Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը դարձնել մատչելի և հասանելի,

-Առողջապահական խնդիրների քննարկում, կանխարգելման գործողություններ,

-Աջակցություն բնակիչների առողջական խնդիրների լուծմանը

Օձուն

-Բնապահպանական վճարների համայնքներին հատկացման մեխանիզմների փոփոխություն՝ անմիջապես հատկացվեն համայնքներին,

-իրավական տեսանկյունից ամրագրվեն սոցիալական կորպորատիվ պատասխանատվությամբ իրականացվելիք ծրագրերը և ֆինանսական հատկացումները,

-Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում,

-Կոյուղագծերի մաքրման կայանի կառուցում,

-Թափոնների կառավարման մեխանիզմների մշակում, կոմպոստի պատրաստման արտադրամասի հիմնում

- Առողջապահական ծրագրերի իրականացում, բուժկետի կառուցում,

-Հողերի դեգրադացիան կանխարգելող միջոցառումներ

-Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը դարձնել մատչելի և հասանելի

Շամլուղ

-Ճանապարհների բարեկարգում

-Բուժկետի կառուցում

-Աղբի վերամշակման ձեռնարկության ստեղծում,

-Առողջապահական ծրագրերի իրականացում, հիվանդությունների կանխարգելում

-Կանաչ գոտիների բարեկարգում և նորերի ստեղծում

-Տուրիզմի զարգացում

Թեղուտ

-«Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի նշված աղտոտող ընկերությունների ցանկում,

-Առաջարկել «Թեղուտ» ՓԲԸ-ին թափանցիկ դարձնել գործունեությունը, բարելավել հանրությանը հաշվետու լինելու գործընթացը, անհապաղ դադարեցնել դատական պրոցեսի մեջ գտնվող բնակիչների նկատմամբ ճնշումները,

-Կիրառելի դարձնել հանրային մոնիթորինգի գործընթացը, նպաստել տեղեկատվության թափանցիկությանը,

-Համայնքում ստեղծել այլընտրանքային աշխատատեղեր,

-Վերանայել «գերակա շահ» համարված որոշումները,

-Գազաֆիկացնել բնակավայրերը,

-Ոռոգման ցանցի կառուցում,

-Ձկնաբուծարանների ստեղծում,

-Խաղահրապարակների, կանաչ պուրակների ստեղծում,

-Կաթի արտադրամասի հիմնում,

-Ջերմոցային տնտեսությունների հիմնում,

-Տուրիզմի զարգացում,

-Բնապահպանական կրթական կենտրոնի ստեղծում,

-Հետազոտական լաբորատորիայի ստեղծում

9. Բացահայտումներ

Հիմք ընդունելով Բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ համարվող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը՝ ԱՃԹՆ ստանդարտը, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից, «Թափանցիկ և հաշվետու հանքարդյունաբերություն» ծրագրի ներքո ՀՀ Լոռու մարզի Օձուն, Ալավերդի, Ախթալա, Շնող համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է՝

1. Թիրախ համայնքներում առկա բնապահպանական, սոցիալական, առողջապահական ոլորտներում տիրող իրավիճակը վկայում է , որ հանքարդյունաբերության հետևանքով ահռելի վնասներ է պատճառված շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը, մասնավորապես.

- Ըստ պաշտոնական տվյալների նշված բնակավայրերի մթնոլորտային օդի և ջրային օբյեկտների աղտոտվածությունը մի քանի անգամ գերազանցում են թույլատրելի նորմերը,
- Կրճատվել են հողային ռեսուրսները և աղտոտվել են հողերը,

- Պրահայի քիմիական-տեխնոլոգիական համալսարանի լաբորատորիայի հետազոտությունների արդյունքում Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Շնող համայնքներում հայտնաբերվել են ծանր մետաղների մեծ քանակություն՝ հողում, ջրում, սննդամթերքում,
- Շրջակա միջավայրի համար լուրջ սպառնալիք են հանդիսանում Թեղուտի և Ախթալայի տարածքում գտնվող 3 պոչամբարները
- Առկա են նաև մի քանի վտանգավոր թափոնատեղեր, որոնք լուրջ սպառնալիք են հանդիսանում Ախթալայի գետակի, որի արդյունքում նաև Դեբեդ գետի, ինչպես նաև տնամերձ հողամասերի համար։
- Չնայած նրան, որ 2016թ. ընդունված ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվեցին ընդերքօգտագործման թափոնների համար դրույքաչափեր՝ յուրաքանչյուր տոննայի համար 8-250 դրամ, որի կիրարկումը կլինի 2021թվականի հունվարի 1-ից, սակայն այս օրենքը չի կանոնակարգում, թե ինչպե՞ս պետք է վարվել մինչ այդ միլիոնավոր տոննաներով կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալների հետ, ուստի այս տարածաշրջանում առկա բոլոր պոչամբարները և թափոնավայրերը շարունակելու են վտանգ ներկայացնել շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը։
- Շրջակա միջավայրի վրա պոչամբարների բացասական հետևանքներից է նաև վթարային իրավիճակների հավանականությունը։ Թեղուտի և Նահատակի պոչամբարները տեղակայված են բարձր սեյսմիկության գոտիներում և ջրհավաք ավազաններում, ուստի հավանական վթարի դեպում ողջ տարածաշրջանին վտանգ է սպառնում,
- Շամլուղի ստորգետնյա հնքավայրը ընդլայնվելով հասել է Շամլուղ բնակավայրի վարչական տարածք և ստորգետնյա պայթեցումներից տների փլուզման վտանգ կա։
- Խախտվում են Ջրային օրենսգիրքը, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը և այլ օրենքներ։
- Հանքարդյունաբերության հետևանքով առաջանում են սոցիալական կոնֆլիկտներ բնակչության տարբեր շերտերի և հանքարդյունահանող կազմակերպությունների, պետական օղակների, ՏԻՄ-երի միջև, բնակիչները իրենց բողոքի ձայնն են բարձրացնում և տարբեր ճանապարհներով այն լսելի են դարձնում պատկան մարմիններին։
- Թեղուտի հանքի շահագործման համար բնակիչները կորցրել են իրենց համար եկամուտ ապահովող հողերը: Օտարված հողերի դիմաց անհամաչափ փոխհատուցման հիմքով Եվրոպական դատարաններում քննվող գործեր են ընթանում:
- Այս տարածաշրջանում առկա են խախտված և չվերագանգնվող լանդշաֆտներ, ծանր հիվանդություններով տառապող հազարավոր քաղաքացիներ և սոցիալական լուրջ խնդիրներ
- Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը շահագործվել է ՀՀ բնապահպանության նախարարության (ներկայումս Շրջակա միջավայրի

նախարարություն) կողմից 2006 թվականին հաստատված ՇՄԱԳ-ով և հանքավայրի I հերթի (8 տարի) աշխատանքային նախագծով թույլատրված փորձաքննական դրական եզրակացության պայմաններով, որն ի դեպ տրամադրված էր մի շարք պահանջների պարտադիր կատարման պահանջով, որոնք պետք է լինեին գործունեության ամբողջ ընթացքի՝ 25 տարվա համար՝ տնտեսական վնասի պատշաճ հաշվարկի եւ օրենքի այլ պահանջներին համապատասխան : Այնուհետև 2010թ.-ին ընկերությունը նոր աշխատանքային նախագիծ է իրականացրել, ըստ որի շատ պայմաններ են փոփոխվել, որոնց հիման վրա ընկերությունը պետք է նոր ՇՄԱԳ ներկայացներ, որը չի արել: Բացի այդ 2018թ. հունվարի սկզբին «Թեղուտ» ՓԲԸ-ն դադարեցրել է գործունեությունը, առանց որևէ նախագիծ ներկայացնելու և 2019թ. հուլիսից կրկին առանց որևէ նախագծի վերսկսել է աշխատանքները: Այս և բազմաթիվ այլ փաստերի հիման վրա պատկան մարմինները ունեին բավական հիմքեր դադարեցնելու հանքավայրի շահագործման լիցենզիան, սակայն դա չի արվել:

- Մղարթի ոսկու հանքավայրի շահագործման հետևանքով փակվել են արոտավայրեր տանող ճանապարհները, հանքը նպաստել է արոտավայրերի չորացմանը, չորացել են նաև գյուղը խմելու ջրով սնուցող աղբյուրները և գյուղը զրկվել է խմելու ջրից, շրջակա միջավայրի համար վտանգ են ներկայացնում նաև Մղարթի ոսկու խտանյութի հարստացուցիչ կոմբինատը և պոչամբարները:
- Ներկայումս Մղարթի ոսկու հանքավայրը չի աշխատում, սակայն չի ներկայացված հանքի սառեցման նախագիծ:

2. Ընդերքօգտագործողների կողմից պետական և համայնքային բյուջեներ կատարված վճարների հաշվին նշված համայնքների սոցիալական և բնապահպանական ուղղվածության, ներառյալ ընկերությունների գործունեությամբ պայմանավորված ազդակիր համայքներին հատկացվող սուբվենցիաներով իրականացվող ծրագրերի վերլուծության արդյունքում պարզել ենք, որ.

- Թիրախ համայնքների 2016-2018թթ. բյուջեների Շրջակա միջավայրի պահպանության համար նախատեսված գումարները հիմնականում ծախսվել են միայն աղբահանության վրա: Այլ ծախսերի հաշվին որոշակի բնապահպանական ուղղվածության ծրագրեր իրականացվել են, բայց դրանք չնչին կարելի է համարել առկա խնդիրների դեպքում, ավելին առողջապահական ծրագրեր համարյա չեն իրականացվում, չնայած տարածաշրջանի հիվանդացությունների վերաբերյալ վիճակագրական խիստ մտահոգիչ տվյալների,
- ընկերությունների գործունեությամբ պայմանավորված ազդեցություն կրող համայնքներին հատկացվող նպատակային՝ բնապահպանական սուբվենցիաները մեծ մասամբ ծախսվում են ոչ նպատակային: Բացի

այդ հանրությունը տեղեկացված չէ այդ գործընթացների մասին, կամ հետաքրքրություն չի դրսևորում, համայնքի ղեկավարը պատշաճ ձևով չի ներգրավում համայնքի բնակիչներին ծրագրի նախագծի քննարկման գործընթացներում: Համայնքի բնակիչները չեն մասնակցում և առաջարկություններ չեն ներկայացնում, որովհետև վերջիններիս մոտ առկա է իրազեկության ցածր մակարդակ իրենց համայնքի բնապահպանական և առողջապահական խնդիրների վերաբերյալ:

- խախտվում է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը, քանի որ օրենքում հստակ նշվում է, որ ընկերությունների գործունեությամբ պայմանավորված խնդիրների լուծմանն են ուղղվելու գումարները, սակայն այդ խնդիրներն անտեսվում են, փոխարենը համայնքը այլ խնդիրների է ուղղում գումարները, որոնք այդ պահին առավել հրատապ է համարում, օրինակ փողոցների ասֆալտապատում, կամ աղբատար մեքենայի ձեռքբերում:
- Անհրաժեշտություն կա հստակեցնելու ազդակիր համայնք-բնակավայր ցանկը: Այս խնդիրն առաջացել է համայանքների խոշորացումից հետո, քանի որ համաձայն օրենքի բնապահպանական սուբվենցիաները հատկացվում են ազդակիր համայնքին, իսկ խոշորացված համայնքներում պետք է հստակեցնել, թե որ բնակավայրն է իրականում ազդեցություն կրում տվյալ տնտեսական գործունեությունից և սուբվենցիաները հատկացնել հենց այդ բնակավայրերին:
- «Թեղուտ» ՓԲԸ-ն 2016-17թթ.-ին չի վճարել մշտադիտարկումների վճարները
- Բացակայում է տեղեկատվությունը «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի 2016թ.–ին կատարված բոլոր վճարումների, ինչպես նաև 2017թ.–ին կատարված դրամագլխի և մշտադիտարկումների վճարների մասին:

3. 2016-18թթ. ընդերքօգտագործողի կողմից թիրախ համայնքներին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերլուծությամբ պարզել ենք հետևյալը.

- Խոշորացված համայնքների բնակավայրերի միջև ոչ համաչափ են բաշխվում նվիրատվությունները, կամ այլ նմանատիպ հատկացումները,
- Համայնքների ղեկավարների հետ հարցազրույցների արդյունքում պարզել ենք, որ վերջիններս տեղյակ են ԱՃԹՆ զեկույցի մասին, մասնակցել են սեմինարների և քննարկումների, սակայն ներգրավվածություն և մասնակցություն չունեն ԱՃԹՆ գործընթացներին,
- 2016-2017թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ն «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին տրամադրել 19,000,000 ՀՀ դրամ, որը ծախսվել է Շնողի մանկապարտեզի վերանորգման համար: Սակայն պարզ չէ, թե ինչու է փոխանցվել ՀԿ-ի հաշվին գումարը, այլ ոչ անմիջապես համայնքի բյուջե:

- Կրկին «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին 2016-2017թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ի փոխանցած 19,000,000 ՀՀ դրամի հետ կապված. Ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվությունների համաձայն «Թեղուտ» ՓԲԸ-ն 2017թ.-ին «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին տրամադրել է 14,486,000 ՀՀ դրամ: Իսկ 2016թ.-ի հաշվետվությունում չկա նշված վճարված գումար, այստեղից հակասություն է առաջանում ինչու 2016թ.-ին «Աջակցություն Շնողին» ՀԿ-ին վճարված 5,000,000 ՀՀ դրամը չի երևում ընկերության հաշվետվությունում:
- 2017թ. «Թեղուտ» ՓԲԸ-ն, Շնող համայնքի բյուջեին է փոխանցել 41,700,000 ՀՀ դրամ, որը ծախսվել է Շնող համայնքի ճանապարհների վերանորոգման և կոյուղագծի կառուցման համար: Այս գումարի մասին ևս ընկերության հաշվետվությունում չի նշված: Այստեղից հետևում է, որ առկա է «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության ոչ թափանցիկ գործելաոճ, որը հակասում է ԱՃԹՆ ստանդարտներին:
- «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն չի իրականացրել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող ծրագրեր, պատճառաբանելով, որ չունի պայմանագրային պարտավորություններ այդ մասով:

4. Ուսումնասիրելով 3 ընկերությունների, ընդերքօգտագործման պայմանագրերը, բացահայտվել են հետևյալ հանգամանքները.

- 3 ընկերությունների՝ «Ախթալա ԼՀԿ», «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերությունների, համապատասխանաբար Շամլուղի պղնձի, Թեղուտի պղնձմոլիբդենային և Մղարթի ոսկու հանքավայրերի շահագործման նպատակով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ կնքված պայմանագրերը կնքված են 2012 և 2013 թվականներին, սակայն պայմանագրերի 2-րդ կետում՝ Պայմանագրի առարկան խոսվում է ավելի վաղ տարեթվերի մասին: Ենթադրվում է, որ այս պայմանագրերը նախկինում կնքված պայմանագրերի հիման վրա են կնքված, 2011թ. Ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքի պահանջներից ելնելով, սակայն լիազոր մարմնի կայք էջում առկա են միայն 2012 և 2013 թվականներին կնքված պայմանագրերը և ոչ մի հոդում չի կատարվում նախկին պայմանագրերին:
- Կնքվել են նոր պայմանագրեր, տրվել են նոր թույլտվություններ և լեռնահատկացման ակտեր, որոնց պարագայում այս հանքավայրերի արդյունահանման ծրագրերը պետք է անցնեին Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր փորձաքննություն, ինչը չի արվել:
- Բոլոր 3 ընդերքօգտագործողները չունեն ազդակիր համայնքների նկատմամբ սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պայմանագրային պարտավորություններ
- Բոլոր 3 պայմանագրերն ունեն փոփոխություններ, որոնք կցված են պայմանագրերին: «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի պայմանագրի փոփոխությամբ տեղի է ունեցել հանքավայրի ընդլայնում, սակայն ընդերքօգտագործողի ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները չի փոփոխվել,

- Շահագործվող հանքավայրերի ՇՄԱԳ նախագծերից ոչ բոլորն են տեղադրված լիազոր մարմնի կայքում։
- Պայմանագրերում նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է՝ ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությամբ նախատեսված պայմանները, սակայն առկա են այդ պայմանների բազմաթիվ խախտումներ, օրինակ՝ Շամլուղի ստորգետնյա հանքի վերազինման նախագծի փորձաքննության դրական եզրակացությունում, փորձաքննական պահանջների մեջ նշված է՝ «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացիան պետք է ավարտին հասցվի 01.03.2020թ.: Սակայն այն այժմ նույնիսկ չի սկսվել: Հետևաբար, ընդերքօգտագործողի կողմից պայմանագրի կետերի խախտում է իրականացվում :
- Բացակայում են հանքի փակման և հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումների ծրագրերը։
- Ընդերքօգտագործողների կողմից խախտվում են պայմանագրով ստանձնած պարտավորությունները

10. Առաջարկություններ

Հիմնվելով սույն ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների վրա, հաշվի առնելով թիրախ համայնքներում իրականացված ֆոկուս-խմբային հանդիպումների և հարցազրույցների ընթացքում բնակիչների, ՏԻՄ ղեկավարների կողմից հնչեցված առաջարկությունները, մասնակցային հետազոտության արդյունքները, ինչպես նաև ծրագրի շրջանակներում նոյեմբերի 8-ին՝ Օձուն համայնքում կազմակերպված «ՀՀ ԱՃԹՆ զեկույցի հաշվետվությունների մատչելիության և հանրային վերահսկողության դիտարկում Ալավերդի, Ախթալա, Շնող, Օձուն համայնքների համար» ֆորումի ժամանակ ՏԻՄ, ՀԿ շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչների կողմից հնչեցված կարծիքները և առաջարկությունները, ներկայացնում ենք առաջարկություններ, որոնք ուղղված են, ինչպես նաև պետական, ՏԻՄ, բիզնես կառույցներին, ինչպես նաև ԱՃԹՆ զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորին

10.1 ԱՃԹՆ զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորին ներկայացվող առաջարկություններ.

- Հաշվի առնելով հանքարդյունաբերության բացասական հետևանքները բնակչության առողջության վրա, առաջարկում ենք ընդլայնել ԱՃԹՆ զեկույցի բովանդակությունը, ընդգրկելով առողջապահական ոլորտին առնչվող տվյալներ (առողջապահական ոլորտը նույնպես դարձնել ԱՃԹՆ-ի մաս),
- ԱՃԹՆ ստանդարտների հետ անհամապատասխանությունների բացահայտումների նպատակով, առաջարկում ենք իրականացնել մետաղական հանքարդյունաբերությանն առնչվող ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն,
- ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց հարթակը օգտատերերի համար առավել օգտակար, մատչելի և հասանելի դարձնելու նպատակով, առաջարկում ենք բարելավել և զարգացնել այն՝ հաշվի առնելով տվյալների արդիականությունը և համապատասխանությունը,

- ԱՃԹՆ գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով, առաջարկում ենք առավել մատչելի դարձնել ԱՃԹՆ զեկույցի բովանդակությունը՝ ներկայացնելով վերլուծված տեղեկատվություն ազդակիր համայնքների սոցիալական, բնապահպանական, առողջապահական խնդիրների և ներկայումս տիրող իրավիճակի վերաբերյալ:
- Ցանկալի է, որ ԱՃԹՆ զեկույցի բովանդակությունը լինի առավել պարզ և հասկանալի հանրության լայն մասսաների համար:

10.2 Առաջարկություններ ՀՀ առողջապահության նախարարությանը

- Հաշվի առնելով հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը մարդկանց առողջության վրա, ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի, չեխական «Արնիկա» քիմիական անվտանգության կազմակերպության կողմից կատարված հետազոտությունների մտահոգիչ արդյունքները, միևնույն ժամանակ պաշտոնական տվյալների բացակայությունը, առաջարկում ենք ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում իրականացնել մարդու առողջության վրա ծանր մետաղների ազդեցության գնահատման հետազոտություն և մշակել հանրության առողջությանը պատճառող վնասի գնահատման հաշվարկման մեխանիզմ:
- Հաշվի առնելով մետաղական հանքարդյունաբերական ձեռնարկությունների աշխատակիցների առողջական ռիսկերը, մշակել և ներդնել բժշկական ապահովագրական մեխանիզմներ
- Բժշկական ապահովագրական մեխանիզմներ մշակել նաև ազդակիր համայնքների բնակիչների համար,

Ներկայացնում ենք նաև ՀՀ Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Շնող, Օձուն համայնքների բնակիչների առաջարկությունները, որոնք հավաքագրվել են սույն ծրագրի շրջանակներում.

- Կրծողների դեմ պայքարի միջոցառումների իրականացում,
- Համայնքներում բժիշկ-մասնագետների ապահովում, բժշկական լաբորատորիաների ստեղծում, բուժկետերի կառուցում
- Առողջապահական խնդիրների քննարկում, կանխարգելման գործողություններ,
- Աջակցություն բնակիչների առողջական խնդիրների լուծմանը

10.3 Առաջարկություններ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընդերքի մասին ՀՀ նոր օրենսգրքի պահանջներից ելնելով, վերակնքվել են «Ախթալա ԼՀԿ», «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերությունների և Էներգետիկայի ու բնական պաշարների

նախարարության միջև կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը, որի արդյունքում առկա են անհամապատասխանություններ և թերություններ, ինչպես նաև ընկերությունների կողմից պայմանահրերի կետերի ակնհայտ խախտումներ, առաջարկում ենք վերանայել պայմանագրերը, այդ թվում՝

- Պայմանագրերում ամրագրել ընկերությունների՝ ազդակիր համայնքների նկատմամբ սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պարտավորությունները:
- Մշակել և Պայմանագրերում ներառել հանքի փակման և հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումների ծրագրերը:
- Դիտարկել եռակողմ պայմանագրեր կնքելու հնարավորությունը ՝ լիազոր մարմին, տնտեսվարող սուբյեկտ և համայնք:
- Վերանայել պայմանագրերի անբաժանելի մաս համարվող Հավելված 1-ը՝ Ընկերության ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները, հստակ ամրագրելով բոլոր վճարների չափերը:
- Պայմանագրերում հստակեցնել ընդերքի շահագործման ժամկետները, ծավալները և այլ նմանատիպ տեղեկատվությունը:
- Բացահայտել ընդերքօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների խախտումները, ձեռնարկելով համապատասխան գործողություններ:

10.4 Առաջարկություններ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին

Իրականացնել տեսչական ստուգումներ ՀՀ Լոռու մարզում գործունեություն ծավալող «Ախթալա ԼՀԿ», «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերությունների հանքարդյունաբերական ձեռնարկություններում, պարզելու համար, թե արդյոք ընկերությունները պատշաճ ձևով իրականացնում են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ի թիվս այլ պարտավորությունների հատկապես ուշադրություն դարձնել՝ օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարման ապահովում, երկրաբանական, մարկշեյդերական և այլ փաստագրության վարում, ընդերքօգտագործման բոլոր ձևերի աշխատանքների ընթացքում դրանց պահպանում, օգտակար հանածոների պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյանը վարում և այլն: Ստուգումների ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել նաև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հարցերին:

10.5 Առաջարկություններ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը

- Փոփոխություն կատարել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում -Հաշվի առնելով համայնքների խոշորացման հանգամանքը, օրենքում նշված ազդակիր համայնքի փոխարեն, դիտարկել ընկերության գործունեությունից

ազդեցություն կրող բնակավայրը, հստակեցնելով իրական ազդեցություն կրող համայնքները (բնակավայրերը)։
-Այս օրենքի համաձայն ազդակիր համայնքներին (բնակավայրերին) հատկացվող բնապահպանական սուբվենցիաների ներքո ծրագրերն իրականացնել հաշվի առնելով բնակիչների կարծիքները՝ ներգրավելով վերջիններիս այդ ծրագրերի նախագծերի քննարկումների գործընթացներին։ Հատկացվող գումարներն ուղղել համայնքի բնապահպանական և առողջապահական խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի իրականացմանը։
-Վերանայել օրենքում նշված աղտոտող ձեռնարկությունների ցանկը, «Թեղուտ» ՓԲԸ-ն ներառել այդ ցանկում։
-Չնայած Ալավերդու պղնձաձուլարանի աշխատանքների ժամանակավոր դադարեցմանը, շարունակել բնապահպանական սուբվենցիաների հատկացումները համայնքին, քանի որ գործարանի երկար տարիների աշխատանքն իր հետքն է թողել բնապահպանական և առողջապահական խնդիրներով հանդերձ և դրանց մեղմելու խիստ անհրաժեշտություն կա։
- Փոփոխել բնապահպանական սուբվենցիաների համայնքներին հատկացման մեխանիզմները, դրանք անմիջապես հատկացնելով համայնքներին։

- Ձեռնարկությունների արտանետումների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովման նպատակով, առաջարկում ենք լրամշակել «Ինքնահսկման մասին» օրենքի նախագիծը, որը նախկինում մշակված է եղել, ընդգրկվել է Ազգային ժողովի օրակարգում, սակայն չի ընդունվել։

- Սահմանել աղտոտման ծավալների առավելագույն շեմ, որի գերազանցման դեպքում դադարեցնել տվյալ գործունեությունը։

- Շրջակա միջավայրի նախարարության կայքում տեղադրել ՀՀ Լոռու մարզում «Ախթալա ԼՀԿ», «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերությունների կողմից իրականացվող նախաձեռնությունների բոլոր նախագծերը (ներառյալ նախորդները, Աշխատանքային և ՇՄԱԳ) և եզրակացությունները։
- Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը դարձնել մատչելի և հասանելի, օպերատիվ ձևով հանրությանը ներկայացնելով շրջակա միջավայրի վիճակի որակի՝ մթնոլորտային օդի, ստորերկրյա և մակերևութային ջրերի, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության, ինչպես նաև թափոնների վերաբերյալ տեղեկատվություն։
- Միջոցներ ձեռնարկել ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի վտանգավոր թափոնավայրերի վերացման և բնակիչների էկոլոգիական անվտանգությունն ապահովման ուղղությամբ։
- Նշված տարածաշրջանում իրականացնել աղտոտված հողերի վերականգնման և հողերի դեգրադացիան կանխարգելող միջոցառումներ

10.5 Առաջարկություններ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

- Իրականացնել փոփոխություններ ՏԻՄ-ի մասին օրենքում, առաջարկել, որպեսզի խստացվի համայնքի ղեկավարի պատասխանատվությունը համայնքի շրջակա միջավայրի պահպանության, բնակչության առողջության պահպանության հարցերի շուրջ, որպեսզի համայնքի ղեկավարը շահագրգռված լինի, որ բիզնես կառույցները ցուցաբերեն բարեխիղճ վերաբերմունք և նվազեցնեն արտանետումները:
- Իրականացնել ՏԻՄ աշխատակիցների վերապատրաստումներ շրջակա միջավայրի խնդիրների, դրանց հետևանքների՝ ներառյալ մարդու առողջության վրա ազդեցությունների վերաբերյալ:
- Աջակցել ՀՀ Լոռու մարզի Ախթալա, Ալավերդի, Շնող համայնքների ՏԻՄ-երին, բնակիչներին անհանգստացնող խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան ծրագրերի իրականացմանը, մասնավորապես՝

-Կանաչ գոտիների բարեկարգում և ընդլայնում,
-Այլընտրանքային էներգիայի աղբյուրների ստեղծում,
-Միջհամայնքային տրանսպորտային ցանցի ստեղծում և բարելավում,
-Կեղտաջրերի մաքրման կայանների ստեղծում,
-Համայնքում ստեղծել այլընտրանքային աշխատատեղեր,
-Թափառող շների և թափառող կենդանիների հարցի կարգավորում,
- Ճանապարհների բարեկարգում, փոշու մաքրում ջրով,
-Աղբի կառավարում, աղբավայրերի ստեղծում, թափոնների կառավարման մեխանիզմների մշակում, կոմպոստի պատրաստման արտադրամասի հիմնում, աղբի վերամշակման ձեռնարկության ստեղծում
-Պոչամբարների անվտանգության խնդիրների լուծում, հնարավորության դեպքում ռեկուլտիվացիա,
-Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում,
-Տուրիզմի զարգացում,
-Կիրառելի դարձնել հանրային մոնիթորինգի գործընթացը, նպաստել տեղեկատվության թափանցիկությանը,
-Վերանայել «գերակա շահ» համարված որոշումները
-Գազաֆիկացնել բնակավայրերը,
-Ձկնաբուծարանների ստեղծում,
-Խաղահրապարակների, կանաչ պուրակների ստեղծում,
-Կաթի արտադրամասի հիմնում,
-Ջերմոցային տնտեսությունների հիմնում,
-Տուրիզմի զարգացում,
-Բնապահպանական կրթական կենտրոնի ստեղծում,

10.6 Առաջարկություններ «Ախթալա ԼՀԿ», «Թեղուտ» ՓԲ և «Մուլտի Գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերություններին

Շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության ազդեցության նվազեցման, ինպես նաև ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման նպատակով առաջարկում ենք կիրառել նոր, առավել մաքուր տեխնոլոգիաներ, նվազեցնել աղտոտման ծավալները, գործունեությունը դարձնել առավել թափանցիկ՝ կամավոր հրապարակել արտանետումների, թափոնների քանակության և այլ նմանատիպ տեղեկատվությունը, վարել պատշաճ բիզնես չվնասելով շրջակա միջավայրը և մարդկանց առողջությունը, պարբերաբար կազմակերպել հանդիպումներ համայնքի բնակիչների հետ, տեղեկանալ համայնքի խնդիրներին, կատարել հատկացումներ դրանց լուծումների համար, տարբեր պատրվակներով չճնշել աշխատակիցներին : Ձեռնարկությունների աշխատակիցներին ապահովել սոցիալական փաթեթներով, այդ թվում՝ բժշկական ապահովագրությունով:

-Առաջարկում ենք «Թեղուտ» ՓԲԸ-ին թափանցիկ դարձնել գործունեությունը, բարելավել հանրությանը հաշվետու լինելու գործընթացը, անհապաղ դադարեցնել դատական պրոցեսի մեջ գտնվող բնակիչների նկատմամբ ճնշումները:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2017-2018թթ. ընթացքում Ալավերդի, Աքորի, Հաղպատ ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները և համապատասխան բնապահպանական ու առողջապահական ծրագրերը[31]

Հավելված 1

Աղյուսակ 9

2017թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումների անվանումը	Գումարը /հազ.դր./	**2018թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումների**	Գումարը /հազ.դր./
Ընդամենը ք. Ալավերդի	**29,473.6**	Ընդամենը Ալավերդի համայնք	**17,1602.1**
		Ընդամենը ք. Ալավերդի*	**169,482.8**
Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	**20,281.3**	**Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում**	**104,240.0**
1.Համայնքի կանաչապատ տարածքների վերականգնում և ընդլայնում /283 հատ ծառ/	3,906.0	1. Համայնքի կարիքների համար երկու աղբատար մեքենայի ձեռք բերում	52,900.0
2.Հենապատերի վերանորոգում	8,456.0	2. Համայնքի կանաչապատ տարածքների վերականգնում, ընդլայնում և բարեկարգում	3,182.3
3.Աղբարկղների ձեռքբերում և տեղադրում **/25 հատ/**	12,45.0	3. Համայնքի կարիքների համար աղբարկղների ձեռքբերում և տեղադրում	2,973.0
4.Հեղեղատարների մաքրում **/241խմ/**	2,552.3	4. Համայնքի փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնում	1,288.3
5.Աղբամանների կողային հատվածների պարսպապատում և ներկապատում **/12 հատ/**	954.0	5. Համայնքի Երիտասարդական և Սանահին Սարահարթ թաղամասի Գայի փողոցների ճեմուղիների վերանորոգում	15,589.0
6. Կանաչապատ տարածքներն ու փողոցները մաքուր պահելու, ոչ սահմանված վայրում աղբ թափելը վերահսկելու և կանխելու նպատակով տեսախցիկների տեղադրում **/80 հատ/**	2,268.0	6. Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների ներկապատում	5,093.0

[31] 2017թ.-ի տվյալներն ըստ www.eiti.am կայքի, 2018թ.-ի տվյալները՝ Ըստ «Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոն» ՀԿ-ի վերլուծության

7. Ակներ թաղամասի խմելու ջրի արդիականացման նպատակով ավտոմատ պոմպի ձեռքբերում	900.0	7. Համայնքի հեղեղատարների մաքրում	2,255.0
		8. Էներգախնայող լուսատուների ձեռքբերում և տեղադրում	5,329.0
		9. Արևային ֆոտովոլտային կայանի ձեռքբերում և տեղադրում	12,585.9
		10.Նախագծա-նախահաշվային աշխատանքներ	3,044.5
Առողջապահական միջոցառումներ	**9,192.4**	**Առողջապահական միջոցառումներ**	**65,242.8**
9. Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	5,858.2	11. Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	9,542.3
10. Առողջության ամրապնդման նպատակով համայնքի երեխաներին ամառային ճամբարների ուղեգրերի տրամադրում	2,970.0	12. Առողջության ամրապնդման նպատակով համայնքի երեխաներին ամառային ճամբարների ուղեգրերի տրամադրում	7,754.5
11. Համայնքի բազմաբնակարան շենքերի աղբատարների և աղբամանների կրծողասպան և միջատասպան աշխատանքներ	364.2	13. Համայնքի հղիներին լրացուցիչ սննդի տրամադրում	3,490.3
		14. Առողջության ամրապնդման նպատակով համայնքի բնակիչներին առողջարանների ուղեգրերի տրամադրում	14,882.4
		15. Համայնքի նորածիններին հիգիենայի պարագաների տրամադրում	2,562.8
		16. Համայնքի երկու հատվածներում (վերին և ստորին) մարզասարքերի տեղադրում	12,299.0

		17 Համայնքի կազմակերպությունների, բազմաբնակարան շենքերի աղբատարների և աղբամանների, կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի տարածքներում կրծողասպան և միջատասպան աշխատանքներ	2,070.0
		18. Համայնքի Բաղրամյան թաղամասի թիվ 10 դպրոցի խաղահրապարակի նորոգում	5,558.4
		19. Համայնքի Սայաթ-Նովա փողոցի նախկին զբոսայգու հարակից տարածքում շուկայի կառուցում	7,083.2
Ընդամենը գ.Աքորի	**24215.9**	**Ընդամենը գ.Աքորի**	**1,207.1**
Բնապահպանական միջոցառումներ	**17535.9**	**Բնապահպանական միջոցառումներ**	***492.0***
1.Համայնքի 2-րդ և 3-րդ փողոցների ասֆալտապատում **/15 քմ/**	13,709.9	1.Աքորի համայնքի 1-ին և 4-րդ փողոցների հեղեղատարների վերանորոգում	492.0
2.<<Չափրելաձոր-Աքորի>> ոռոգման ջրագծի հիմնանորոգում	3,826.0		
Առողջապահական միջոցառումներ	***6,680.0***	**Առողջապահական միջոցառումներ**	**715.1**
3.Մանկապարտեզի շենքի վերանորոգում	3,830.0	2.Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	715.1
4.Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	950.0		
5.Համայնքի հղիներին լրացուցիչ սննդի տրամադրում	950.0		
6.Համայնքի բնակիչներին ատամնաբուժական	950.0		

ծառայությունների մատուցում			
Ընդամենը գ.Հաղպատ	**2,977.3**	**Ընդամենը գ.Հաղպատ**	**912.2**
Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում	***2,055.0***	**Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում**	0.0
1.Համայնքի աղբահանության կազմակերպում, աղբի տեղափոխում Ալավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր	2,055.0		
Առողջապահական միջոցառումներ՝	922.3	**Առողջապահական միջոցառումներ՝**	***912.2***
2.Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	675.8	1.Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	912.2
3.Համայնքի հղիներին լրացուցիչ սննդի տրամադրում	246.5	2.Համայնքի հղիներին լրացուցիչ սննդի տրամադրում	0.0

Օգտագործված նյութեր, կայքեր

ԱՀԹՆ զեկույց, «Դեպի օրինավոր ընդերքօգտագործում», «GEO Ալավերդի», «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ծրագիր», Հարություն Մովսիսյան

www.eiti.am, www.minenergy.am, www.mtad.am, www.akhtala.am, www.armstat.am, www.mnp.am, www.armmonitoring.am , www. teghut.am, www.ecolur.org , www.mtad, www.urbannews.com, www.hetq.am, https://www.facebook.com/armccms.org/